



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



1878



Tiwtiwnchean, Mkrtsch
Tsatsuk megh'k mardkayin...

ՄԿՐՏԻՉ ԹԻՒԹԻՒՆՑԵԱՆ

(Վկայեալ վիրաբոյժ Պատբեհի բժշկական լարձարանէ)

ՆԱՇՈՒԻԿ ՄԵՂՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԵՌԻ

ԵՒ ԿԱՄ

ԱՓՐՈԴԻՏԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

«Երկնից մարդկային սե-
ռին շնորհաց ամենեն զբլ-
խաւոր եւ ամենեն ընտիր
պարզեւը կեանքն է, որոյ
յարգը բախտողը մարդկա-
յին ընկերութեան մէջ մնա-
չու արժանիք չէ : »

Թակըր

«Միայն խաղողին նիւթը
չէ որ մարդուս բարոյակա-
նութիւնը կ'ապականէ, այլ
փառամոլութիւնը, արծա-
րասիրութիւնը եւ գեղեցիկ
կանայք ալ նոյնը կ'արզա-
սաւորեն :

Թօրք

Տեր եւ Հրատարակիչ

Պ. Պ. ՊԱԼԵՆՑ



71

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1894

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

Grad
EREN
619
BUHR

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ուր բարոյական կրթութիւն եւ առողջաբանական օրէնք չկայ, անդ ո՞չ մարդկային կատարելութիւն ու երջանկութիւն եւ ո՞չ կատարեալ առողջութիւն կը տեսնուի :

Երբ ո՛ եւ է ժողովուրդ հակառողջաբանական եղանակաւ կրնքանայ, անոր մէջ պիտի տեսնես բազմարի ախտացեալներ, որք իւրեանց անձանց վընասելէ զատ՝ այլոց ալ կեանքը վտանգի կենքարկէն : Ուստի ամեն անհատ պարտի գիտնալ առողջ ապրելու միջոցներ՝, որպէս զի կանոնաւոր կեանք ունենայ : Ով որ բնութեան սահմանէն դուրս կելլէ, նա աճապատճառ պիտի վնասուի քէ՛ բարոյապէս եւ քէ՛ ֆիզիկապէս : Երբ մէկը իւր անձը, իր կեանքը կը պահպանէ, նա ո՞չ միայն իւրեն կը ծառայէ, այլ եւ հանուր մարդկութեան :


Յոյս ունիմք քէ ընթեցողը սոսկալով կը կարդայ ներկայ գրեղիս, եւ կը խորչի ա՛յն ամեն անբարոյականութիւններէ, որք կորսաբեր կը լինին մարդկային սեռի :


Եթէ մեր նկարագրած առողջաբանական օրինաւոր խրատներուն եւ հրահանգաց հետեւի ընթեցողը, ա՛յդ կը լինի միայն մեր վարձատրութիւնն ու բաջալերութիւնը :


Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՁԵԱՆ

4 Մայիս 1894, Խւսկիւտար

(Կ . Պօլիս)







Առույգ Երիտասարդ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵՂԻ ՕԲԻԱՆՈՒ



ԳԻՃՈՒԹԻՒՆ

Գիճութիւնը (Masturbation) աշխարհիս ամենասարսափելի մոլութիւններէն մին է, որուն զոհերը բազմաթիւ են. երբ կը տեսնես երիտասարդ պատանի մը դալկահար, նիհար որպէս կմախք, դէմքը մագաղաթի նման դեղնած, ներսը փոտած պտուղի նման ապականութեամբ լցուած, ծունքերը դողդոջուն, գիտցիր որ նա մաշած եւ գիճութենէ խորչակահար է եղած. ոմանք սոյն մոլութեան 13—14 տարեկան հասակէն իսկ ոմանք ալ 16—18 տարեկանէն կ'սկսին, իսկ աւելի փոքրերը որ գիճութեան միջոցին թէպէտ եւ սերմնական հոսում չեն ունենար, բայց սյն սպանիչ հաճոյական ըգգացմունքը կունենան եւ տգիտաբար կը շարունակեն բոլրովին կործաննելու եւ ոշնչացնելու համար իրենց մարմնոյ առողջութիւնը, շատեր զգալով եւ կատարեալ համոզուելով թէ իրենց Փիզիքական առողջութիւնը կը խանգարուի գիճութեան պատճառաւ, ալ եւս չեն կարող հրաժարիլ, իբրեւ գերի կաշկանդուած են, ամեն ժամ եւ ամեն վայր-

կեւան, գիշերը քունի եւ ցերեկը արթնութեան մէջ իրենց մասձումը, գործը ատոր վրայ է, կարծես ուխտեալ թշնամի մը խեղճ պատանեաց ետեւէն կը վազէ անոնց կեանքը սպառելու համար. զգոյշ կացէք, ով պատանիք, չըլայ որ մի անգամ օձիգնիդ ձեռք տաք, մի անգամը բաւական է, ալ անկեց յետոյ դուք պիտի համարուիք գիճութեան զոհ :

Երբեմն ծնողքներ անգիտակցաբար իրենց զաւակաց ծննդական գործարանը կը չօշափին, ատով պատանին հաճոյք կզգայ եւ քանի մեծնայ այդ հաճոյքը կը կրկնապատկի եւ 12 տարեկան երբ լինի ահա այն ատեն կսկսի գիճութեան, ուստի այս կէտը ծնողաց լուրջ զգուշութեան կը յանձնեմ, նոքա պարախն հսկել այս մասին ո եւ է թշունութիւն յառաջ չը բերելու համար :

Գիճութենէ յառաջ եկած վտանգաւոր հիւանդութեանց ախտանշաններն են հետեւեալք, ստամինի խանգարում, ջղային դրութեան սաստիկ գրգռում, գիզիգական գորութեան սպառում, ուղեղային ցնցողական կրկնակի բաղիլումներ, որ շատ անգամ մահառիթ են, ժամանակի առաջ ծերանազ, իմացական կարողութեանց խանգարում, շնչառութեան գործարանց տկարութիւն, կապտագոյն օղակներ աչաց շուրջը, դեմքի գունատուրին, շրբանց տծգնութիւն, մարմնոյ անման եւ զարգացման դադարում, աղեաց բորբոքում, սաստիկ զինու ցաւ, միզելու դժուարութիւն, աչաց փրութիւն, ջղացաւութիւն, լուսնուտուրին (Epilepsie)

ապշուրին (Idiot), ասոնց ամենէն վերջը բռխիս (Phthisie) ուսկից կը բացուի ճանապարհ դէպ ի գերեզման :

Երբ այս բողոքը կը տեսնենք, գիճութեան վնասակարութեան վրայ կատարեալ համոզում մը կը գոյացնենք բնականաբար, եւ եթէ դարձեալ շարունակուի այն ատեն Աստուծոյ օրինաց առջեւ մեղապարտ կը համարուինք, վասն զի Աստուծո որոշած է մարդկանց մարմնոյ այն անդամը գործածելու ատենը : Օրինաւոր ամուսնութենէ առաջ կարծեմ իրաւունք չունինք գործածելու : Մարդկութեան նախածնորդը Աղամ եւ Եւա հակառակ Աստուծոյ պատուիրանաց արգիլեալ ծառին պտուղին ճաշակեցին, նոյն րոպէին շատ քաղցր էր այդ պտուղը, բայց քաղցրութենէ անմիջապէս վերջ գգացին անոր դառնութիւնը, դառն արտասուօք զղջացին վայրկենական հաճոյք յագեցնելուն համար, եւ իւրեանց մեղաց պատիժն ու անհճքը Արարչի բերնով վճռուեցաւ :

Ումանք գիճութեան սկսելէ անմիջապէս վերջ տեսնելով վնասները իսկոյն կը հրաժարին, եւ երկար ատեն դադրեցնելէ յետոյ դարձեալ կը սկսին, սուքա առ հասարակ ամուր կազմուածքով վիթխարի երիտասարդներ են որ 18—20 տարեկանէն սկսելով մինչեւ 25—30 տարեկան հասակնին այն անգութ չաստուածուհոյ առջեւ ծնրադրելէ վերջ կ'ամուսնանան գեղեցիկ օրիորդի մը հետ, նա փոխանակ վերջ տալու իր նախկին մոլութեան (գիճութեան) այժմ իւր ցանկութիւնը երկու կերու

պով ի գործ կը դմէ, շատ ամուսնացեալ մարդոց հանդիպած եմ որոնք կը խոստովանէին թէ գի- ճութիւնը աւելի հաճոյական է քան թէ բնական մերձաւորութիւնը, եթէ հաւատանք որ սոքա զերծ կը մնան վտանգներէ շատ կը սխալինք, թէ- պէտ եւ կը մխասուին բայց ոչ մահացու կերպիւ, առ հասարակ սոցա զաւակներն ախտաւոր, տկար- եւ ողորմելի արարածներ կը լինին, եւ նոցա եր- կարակեաց լինելը անհաւատալի կը թուի մեզ. շատ անգամ ալ կը պատահի որ երիտասարդու- թեան ժամանակ գիճութեան հետեւող հօր մը զաւակը գեռ լցո չի տեսած իր մօրը արգանդին մէջ կոչնչանայ, վտանգի ևնթարկելով նաեւ իր մօրը կեանքը, անշուշտ սոյն չարեաց պատճառը նոյն ինքը՝ մոլի հայրն է :

Շատեր ալ ամուսնանալէ շատ քիչ ժամանակ վերջ իրենց առնական զօրութիւնը բոլորովին կը կորսնցունեն դեռ երիտասարդ հասակի մէջ. իսկ ոմանք ալ ամուսնութենէ առաջ սոյն վիճակի են- թակայ կը լինին եւ բժշկաց դիմելով կը դարման- ուին :

Մեր մէջ դժբաղդաբար սովորութիւն չէ եղած մինչեւ ցարդ գիճութեան վրայ խօսիլ ոչ ծնողաց եւ ոչ ալ դաստիարակաց կողմանէ, ասկից շատ տարիներ առաջ զրեթէ արգիլուած էր սոյն մոլու- թեան վրայ խօսիլն, ծննդական գործարանաց համար յատուկ ամօթխածութիւն մը կը տիրէր ամենուն վրայ, իւրաքանչիւր սեռի եւ հասակի մէջ, իսկ այժմ ծննդական գործարանաց փափ-

կութիւնը եւ գիճութեան պատճառած հազարաւոր մնասները ամենակարեւոր է ուսուցանելու բացարել պատանեաց, սոյն սոսկալի լնասներէն ինչպէս արական սեռը եւ նոյնպէս իդականը զերծ չի մնար, այս առթիւ թէ ծնողք եւ թէ դաստիարակը պարտին մերթ ընդ մերթ խօսիլ ու խրատելով զգուշացնել երիտասարդ պատանիներն գիճութեան սոսկալի եւ մնասակար հետեւանաց վերայ, սովաւ մեծ ծառայութիւն մ'ըրած կը լինին մարդկային ընկերութեան:

Նատ անգամ փորձուած է թէ բարձրահասակ պատանիք գիճութեան աւելի ընդունակ են, իսկ կարձահասակը զերծ սոյն մոլութենէ: Գիճութեան հետեւող պատանի մը ըստ արտաքին երեւոյթի մարմնոյ կատարեալ առողջ կրնայ երեւիլ, ասոր պէտք չէ խարուիլ, այլ ընդհակառակը համոզուելու է թէ անոր մոտային կարողութիւններն իսպառ խանգարուած է, ներքին գործարաններն հիւանդէ, փտուած խնձորի նման: Յիրաւի շատ անտանելի է աշխարհիս վրայ այս տեսակ կեանք մ'սնցընելլ, նա միայն իր հեշտութեան վրայ կը մըտածէ, պատանւոյն աչքին չերեւիր ոչ ուսմունք, ոչ աշխատութիւն, ոչ կրօնք եւ ոչ աշխարհ, նա ամեն բանէ զզուած է, անմեղ զուարձութիւն եւ զբօսանք ատելի են իրեն համար, նա ատելու իրաւունք չունի այդ բոլորը, բայց մարդկային ընկերութիւնը իրաւունք ունի ատել զինքը: ՏՕԴ-ԹՈՒՐ ԹԵՒՍԾ հետեւեալ կերպիւ կը խօսի սոյն մոլութեան առթիւ: « Գիճութեան պատճառաւ

մարգկային մարմնոյ մեքենայն կը խանգարի , յի-
շողութիւնը կը կորուսի , երիտասարդն իւր կայ-
տառութեան օրերուն մէջ ծերութեան ամէն նը-
շաններն իր վրայ կը կրէ եւ կզգայ , ամեն գործի
անյարմար եւ անընդունակ կը լինի , կեանքն ու .
աշխարհը ծանր եւ անտանելի բեռ մը կը համարի
նա , թէ իրմէ եւ թէ այլոցմէ դժգոհ , երկիւղ մը
անոր մէջ կը տիրէ որ անտանելի ցաւէ մ'ալ մ-
ռաւել խիստ է . խղճի խայթն է այն որ երթալով՝
կաճի եւ մահուանէ վերջն ալ դժոխոց մէջ անշի-
ջանելի հրոյ փոխուելով յաւիտեան զինքն կը լա-
փէ ու կը մաշեցնէ : Ներջապէս այս աղետներէն
զատ ուրիշ սարսափելի հարուած մ'ալ կայ , որոյ
անվրէպ ենթակայ կը լինի գիճութեան հետեւողն ,
երբ ամուսնանայ տղայոց հայր լինելէ կը զրկուի .
հակառակ պարագային եթէ զաւակներ ալ ունե-
նայ , տկար , անզօր , հիւանդոտ , խեղճ ու թըշ-
ուառ արարածներ կը լինին ։ Այսպէս է գիճու-
թեան հետեւողներու վիճակը , նոքա ինքզինքնին
կ'սպաննեն Փիզիքապէս եւ բարոյապէս :

Գիճութեան հետեւող երիտասարդ մը վերո-
յիշեալ բժշկին հետեւեալ նամակը սւղզելով օգ-
նութիւն կը խնդրէ , որով իր վիճակի դառնու-
թիւնը կստորագրէ : Կըզգամ որ կուրծքիս մէջ
եղող բոցը մարելու վրայ է , իմ առջի կայտառ
զգացումներս փացած են , հազիւ թէ երեւակա-
յութեանս մէջ քանի մը կայծեր դեռ կը պլան ,
անոնք ալ զազրալի նկարներով աղարտեալ են ,
ամեն բան ինձ երազի նման կը թուի , իմ էու-

թիւնս հազիւ հազ կզգամ, ո եւ իցէ բան մը խիստ դժուար կըսրոնեմ, մէկ խօսքով կզգամ որ վերջս մօտեցած է, թէեւ լաւ կը քնանամ լաւ ախորժակ եւ բաւական առողջ տեսք մ'ունիմ» :

Ուրիշ մը հետեւեալը գրած է նոյն բժշկին։ «Դեռափթիթ հասակիս մէջ, կարծեմ ութ կամ տաս տարեկան եղած ատենս (սարսափելի) այն կործանիչ մոլութեան, ըսել կուզեմ գիճութեան սկսայ, որ իմ բոլոր մարմինս կանուխ աւերեց։ Քանի մը տարիէ ի վեր բոլոր ոյժս կորսնցուցած եմ, ջիղերս վերջին ծայր տկար ու անզօր են, ձեռքերս բնաւ չեն բռներ ու շարունակ կը դողդողան ու կը քրտնին։ Ստամքսս խիստ կը ցաւի, ինչպէս նաեւ թեւերս, սրունքներս, կռնակս ու կուրծքս, շատ կը հազամ, աչքերս աղօտած են, ախորժակս գազանի անյագութեան աստիճան հասած է։ սակայն եւ այնպէս օր ըստ օրէ նիհարնալու վրայ եմ, եւ օրէ օր դէմքս ու մարմինս կը խանգարուի։ Դարձեալ նոյն բժշկին կը գրէ ուրիշ անձ մը։


Պատանեկութեանս մէջ գիճութեան գերի եղայ, որով առողջութիւնս խսպառ խանգարուեցաւ, շարունակ զլիսու ցաւ եւ զլիսոյ պտոյտ ունիմ, կը վախնամ որ մի գուցէ կաթուածահար ըլլամ։ Կուրծքս բռնուած է, խիստ դժուարաւ շունչ կառնեմ, ստամքսս եւ աղիքներս կը ցաւին, բոլոր օրը թմրած, վհատեալ, ծոյլ եւ ձանձրալի կեանք մը կ'անցունեմ, դիշերն ալ քունս խիստ անհանգիստ է, մարմինս յաճախ կը քերուի,


նըս կապարի նման գունատէ, աչքերս պղտոր են
ու կը ցաւին, բերանս գէշ կը հոտի, ալ կեանփէս
ձանձրացած եմ:

«Բալած ատենս հազիւ հազ երկու հարիւր
քայլ կըրնամ առնել առանց նստելու եւ հոգնու-
թիւն առնելու, կերակուր ախորժակով կուտեմ,
սակայն ասի ինձ տանջանք մ'է քանզի կերակուրէն
ետեւ ստամոքսս ցաւ մը կը մտնէ, այնպէս որ
շատ անգամ ստամոքսս նորէն պարպելու կըստիպ-
ուիմ, քանի մը բառ կարդալէ զկնի աչքերս կը
ջրոտին ու կը ցաւին, շատ անգամ յակամայս կը
կառաջեմ» :

Կան շատ նամակներ որ գիճութեան ճիրան-
ներուն մատնուած զանազան անձանց կողմանէ
գրուած են երեւելի գիտնական բժիշկներու, սա-
կայն այսչափը բաւական համարեցի ապացուցա-
նելու եւ հաստատելու համար թէ գիճութիւնը
մարդս որ աստիճան դառն եւ սոսկալի վիճակի
կը հասցնէ :

Յոյս մեծ ունիմք թէ սոյն նամակներն երբ
կարդան գիճութեան ճիրաններէն բռնուող երի-
տասարդք եւ դեռահասակ պատանիք պիտի փու-
թան ետ կենալ այդ կործանիչ մոլութենէն :





Ահաւացեալ Երիտասարդ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ



ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ (Spermatorrhée)

Սերմնահոսութիւնը գիճութեան արգասիքը եղող գլխաւոր ախտերէն մին է, սոյն ախտին ու- թիշ պատճառներ ալ կան ծնունդ տուող բայց գիճութեան հետեւող մը անպատճառ սերմնահո- սութենէ ալ ալիտի բռնուի, երբեմն ալ ժառանգ- ական կը լինի, սոյն հիւանդութեամբ տտուապեալ մը սաստիկ ջղային տկարութիւն կունենայ, եւ եթէ իր Փիզիքական առողջութիւնը բնականէն տկար եւ նիհար է, նա երկար ատեն չէ կարող դիմանալ, քիչ ժամանակի մէջ կը հալի, կը մաշի, եւ վերջապէս ծիւրական ախտով կը վերջացնէ կեանքը:

Սերմնահոսութիւն ունեցող երիտասարդք զու- գաւորութեան բնական գործողութիւնը կատարե- լու անկարողութեան մէջ կը գտնուին, վասն զի այն վտանգաւոր հիւանդութեան ենթակայ եղող անձինք առհասարակ տոփակական զգացմանց եւ ցանկական կրից վրայ կը մտածեն, իւրեանց բոլոր զբաղումը այդ է, բաւական է որ նա երեւակա- յութեանը մէջ բերէ գեղեցիկ կին մը կամ օրիորդ մը, իսկոյն ինքնին տեղի կունենայ սերմնական հոսումը առատօրէն եւ այս պատճառաւ իւր մարմ-

նոյն գործարանաց տկարութիւն պատճառելով նա կը մատնուի անդարմանելի հիւանդութեանց :

Սերմնահոսութիւնը առ հասարակ գիշեր ատեն կը պատահի , երբ նա կակուղ անկողնոյ մէջ կը պառկի , կէս քուն , կէս արթուն տռփոտ երազներով սերմնական հեղուկը կը հոսի . այդ զուարձալի եւ հեշտական երազները ծննդական գործարանի գրգռումէն յառաջ կուգայ , նա ամեն գիշեր շարունակաբար իր երազին մէջ գեղեցիկ աղջկան մը հետ կը գտնուի , ցերեկ ատեն ալ առանց հաճութեան սերմնական հեղուկի հոսիլը կզգան :

Այս վիճակի մէջ եթէ ամուսնանան անկարելի է որ զաւակ ունենան , ուստի , նախ պէտք է բժշկական գարման եւ յետոյ ամսւսնութիւն :


Կան այնպիսիներ ալ որք իւրեանց առնական զօրութիւնը գիճութեան պատճառաւ դեռ երիտասարդական հասակի մէջ կորանցուցած , կենդանական յատկութիւնը բոլորովին կործանած այս վիճակի մէջ կելեն դեռատի աղջկան մը հետ կ'ամուսնանան . խեղճ կինը կը տեսնէ որ ընութեան պարգեւած ամենէն մեծ երջանկութիւնը իր երիտասարդ ամուսինը չէ կարող մատակարարել կ'սկսի սառն կերպիւ նայիլ անոր . անմեղ կնոջ արդարացի ատելութիւնը կ'սկսի դէպի ի իւր ամուսինը : Իրաց այս վիճակի մէջ կինը երբէք յանցաւոր եւ մեղադրելի չէ , նա կատարեալ իրաւունք ունի բողոքելու :

Զուգաւորելու անկարողութիւնը առ հասարա էրիկ մարդոց կը վերաբերի . կանայք զերծ են այ

պատասխանատութենէ, զուգաւորութեան մեծ
պաշտօնը էրիկ մարդոց վրայ է, եթէ նա անկա-
րող է, ուրեմն, բնչ երջանկութիւն կրնայ վայելել
մարդկային ընկերութեան մէջ: Երբ սոյն կացու-
թեան ենթակայ կը լինի մարդ, նա ատելի է միշտ
վասնզի ոչ ոք մեղաւոր է այդ մասին, ինքն է մի-
այն պատասխանատու, վասն զի ինքը իր ձեռքովը
զրկած է իր անձը աշխարհին ամենամեծ մէկ եր-
ջանկութենէ: Շատ ատեն սերմնահոսութիւնը կը
պատահի որ միզելու ատեն միզին հետ դուրս կեցէ
սերմը, սորա պատճառը սերմը անօթին մէջ չիկր-
նալով կենալ, կը դառնայ փամփուշտն եւ անկից
կը հոսի, եթէ սոյն ախտի ենթարկեալ անձի մը
միզին վերջին կաթիլները վերլուծովի (Analyse)
պիալի գտնենք անոր մէջ սերմնական հիւթը, ասի
սերմնահոսութեան ամենէն գէշ տեսակն է որուն
դարմանը դժուարին է եւ մարդ տարիներով կը
տառապի: Ուրեմն դեռահաս պատանիք եւ երի-
տասարդք պարտին ի նկատի առնուլ սոյն կենա-
կան խնդիրն. պէտք է զգուշանալ ամէն ժամ եւ
ամէն վայրկեան: Վերջին զղջումը անօգուտ կը լի-
նի, շատ անդամ մեծամեծ չարեաց եւ աղետից
պատճառ կը լինին, մարդ յուսահատելով իր կեան-
քէն թերեւս անձնասպան ալ կարող է լինել: Ա-
մօթիսածութեան օրէնքը եղծել՝ Աստուծոյ դէմ
մեղանչել է, բացի օրինական ամուսնութենէ ու-
րիշ որ եւ էլկերպիւ ցանկական կիրք յագեցնելը
մնասակար է. այս առթիւ թէ բնութիւնն եւ թէ
կրօնքը խստիւ կարգիչն մեզ զայն ի դործ դնելք,

Մինչեւ իսկ քնոյ մէջ եղած սերմնահոսումը պիղծ
կը համարուի, մարդկային կենաց ծիլն համարուող
եւ պաշտօն ունեցող այն կենսական հիւթը չարա-
չար սպառել եւ ոշնչացնելը սրբապղծութիւն է,
սերմնեղուկի կորուստը մարմնոյ եւ մտաց մեծ
մասի կորուստն կը համարուի, ուրեմն պարտիմք
գգուշութեամբ պահել զայն . թէ գիճութենէ եւ
թէ սերմնահոսութենէ տառապող երիտասարդը
թող չի կարծէ որ վնասէ զերծ կը մնայ, վաղ
կամ անագան նա պիտի գտնէ իւր պատիժը, կան
շատեր ալ որ իւրեանց մոլութիւնը մարդկային
ընկերութենէ ծածուկ պահելու նպատակաւ մին-
չեւ իսկ իւրեանց մտերմին չեն յայտներ այդպիսի
հիւանդութեան մը ենթակայ լինելին, բայց ատով
աւելի կը տկարանան, աւելի վտանգի կենթար-
կուին, որքան ժամանակ գաղտնի մնայ, այնքան
սարսափելի կը լինի սորա հետեւանքներն, այս
բոլոր վնասները երբ աչքի առաջ ունենամք եւ
դարձեալ շարունակուի, այն ատեն յաւիտենական
անէծքի տակ կը մնամք եւ կարծեմ ասի մեղան-
չական եւ ամօթալի է մարդկային սեռի համար,
ով որ ամօթխածութեան եւ պարկեշտութեան
ազնիւ զգացումները իր սրտին մէջ կը կրէ պէտք
է հեռանայ սոյն ապականութենէ . եթէ չի փա-
փաքիր իւր սիրտն ու հոգին պղծէ ու թունաորէ,
չափազանց յիմար է այն անձը որ վայրկենական
հեշտութեան մը համար իւր անգին կեանքը վրայ
կուտայ : — Խորչեցէք երիտասարդներ : —







Առաջին աստիճանի սիֆիլիզով վարժակեալն
(Syphilis Primitive)

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ



ԱՓՐՈԴԻՑԱԿԱՆ ԵՒ ՏՐՈՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ՍԻՖԻԼԻՏ (Syphilis)

Ապօրինի զուգաւորութիւններէ յառաջ եկած հիւանդութեանց ամենասուկալին է Սիֆիլիզն (Թաղղիական ախտ) (Ֆրէնկի) սորա գվասաւոր պատճառներն են. առողջ մարդու մը վարակուած կը-նոջ հետ զուգաւորուիդը. եւ կամ վարակուած անձի մը առողջ կնոջ մերձենալը, շատ անգամ ալ մարդ կրնայ վարակուիլ զուգաւորութեան տարբեր կերպով, այսինքն զիրար համբուրելով, մէկ տեղ բնակիլ, ճաշել մի եւ նոյն ամաններէ, վա-րակեալիք գաւաթէն ջուր խմել, եւն. եւն. սոքա փոխանցական միջոցներ են, բաւական է որ Վի-րուս Սիֆիլիթիք (Virus Syphilitique) ըսուած թունաւոր ժահրը՝ առողջ մարդու մը փոխանցուելով անոր արեան խառնուի եւ այդ վարակեալ արինը շրջան մ'ընէ անոր մարմնոյն մէջ, ահա կունենամք Սիֆիլիզէ ախտացեալ թշուառ մը: Սիֆիլիզ բառի նկատմամբ շատ եւ իրարմէ տարբեր կարծիքներ կան բժշկական աշխարհի մէջ, ուսանք Յունական բառ մ'է կըսեն, իսկ շատերն ալ կատիններէն (sus, սուս) (խոզ) բառէն առ-

նուած կը կարծեն , շատեր ալ կը սիրեն հաւատալ
թէ շատ հին ժամանակները առաջին անգամ հո-
վիւները տուած են Սիֆիլիզ անունը , երբ արեւա-
պաշտութեան ժամանակ որոնք որ Արեւու պէտք
եղած յարդանքները չէին տար սոյն ախտով կը
պատժուին եղեր , դնելով յանցաւորը Սիֆիլիզով
վարակուած անձի մը քով . որպէս զի նա ալ վա-
րակուի եւ իւր պատիթը կրած լինի : Մարդկային
սեռը իր երիտասարդական թարմութեան ժամա-
նակ ենթակայ կը լինի սոյն ախտին . Սիֆիլիզը
վարակելով զերիտասարդն նախ անոր ամրող մարմինը կը ծածկուի թունաւոր վերքերով , յետոյ
քթին ոսկորը եւ աճառը փոտելով կանհետանայ
բերնին առաստաղը կը ծակծկի , երիտասարդի
գեղեցիկ դէմքը տգեղանալով կատարեալ հրեշային
դէմքի մը կը փոխուի , կոկորդը վերքերով կը պա-
շարուի , ձայնը կը մարի եւ խօսելու անկարող վի-
ճակի ենթարկուելով իւր ամբողջ մարմնոյ կեանքը
կանհետանայ իսպառ , եւ կը դառնայ հաջու մաշ
մի էտկ , անտանելի ցաւեր կզգայ , մանաւանդ
գիշերները երբ անկողին կը մտնէ իւր օրուան
ցաւերէն հանգստանալու եւ մի քիչ շունչ առնելու
համար , ահա այսպէս կը տանջուի գիշեր ու ցերեկ
անընդհատ . «Սիֆիլիզը մարդուս կեանքը կը
թունաւորէ , կըսէ կուֆէլանտ , երիտասարդաց
Աստղկան ունեցած ցանկութիւնն եւ իւր միրային
արշաւանաց հետեւանքն ու վարձատրութիւնն է ,
դովաւ երիտասարդը վտանգի կենթարկէ իր կեան-
քի ապագայն եւ անդարմանելի կորստեան վիհը
կը գլորի :

Տովիական ախտիւ վարակեալ ծնողք իւրեանց անմեղ եւ սիրասուն զաւակաց ժառանգ կը թողուն այդ անիծեալ հիւանդութիւնը, եւ ատոր փոխարէն ծնողք իրենց բաժին կունենան նոցայաւիտենական անէծքը. որչափ որ ողջ մնան անկարելի է որ իւրեանց խիղճը չի տանջէ զիրենք:

Երբ Սիփիշիզը մուտք կը գտնէ ընտանիքի մը մէջ եւ կը վարակէ անդամներէն մին, պէտք է գիտնալ որ ալ եւս այդ ընտանիքի կեանքը ապականուածէ, անհրաժեշտ պէտք կզգացուի հեռացնել այդ վարակուած անդամը, բաժնել այրը իւր կնոջմէն, քոյրը իր եղաօրմէն եւ զաւակը ծնողքէն, վասն զի նա ալ եւս ընտանեկան անդամ լինելու, ընկերական կեանք վարելու արժանի չէ:

Կան այնպիսի վայրկենական ուրախութիւններ, ցանկութիւններ զոր շատ անգամ յաւիտենական թշուառութեան կը դատապարտեն զմարդ, նա ալ եւս պարտաւորեալ է մինչեւ իր գերեզմանի դուռը անընդհատ չարչարուիլ ու տանջուիլ:

Շատ հին ատեններու ժամանակակից գըրագետներ եւ պատմաբաններ կը յիշատակեն թէ՝ տովիական ախտը այն ատեն ալ գոյութիւն ունէր: Զինաց պատմագէտներ ալ Գաղղիական ախտինը-կատմամբ բաւական ապացուցական գրութիւններ ունին, Սուրբ գրոց մէջ ալ յիշատակուած է այդ ախտի համար, թեպէտ ոչ անուամբ. (Ղուկ. Ժ. Գլ. հմր. Բ.) Աստուածաշունչէն կը տեղեկանամք թէ հրեայք վարակեալ են եղեր տեսակ մը վերքերով:

Սոյն ախտէն վարակեալք ընդհանրապէս անթիգատ եւ ամեն օր լուացուելու սովորութիւն չունեցող ժողովուրդք են. Մովսէս ամեն անգամ ուշազրութիւն կընէր որ անթիգատ եւ անմաքուր հրեայ չի մնայ, եւ խստիւ արգելք դրաւ որ անթիգատ եւ անմաքուր ազգաց հետ ամուսնական յարարերութիւններ չունենայ Խորայելի ազգը:

Իպոկրատ եւ Կալչն ծննդական գործարանաց վերքերու վրայ կը խօսին: Յոյն, Ափրիկեցի բը-ժիշկը նաև եւ կը հաստատեն սոյն հիւանդութիւնը, Հին Հռովմայեցւոց ժամանակակից գրագէտ բը-ժիշկներէն Սելց կը նկարագրէ թէ՝ երբ մէկը Ափրոդիտական հիւանդութեամբ վարակուած է եւ իւրիգական կամ արական անդամին վրայ վերք մ'ունենայ, ամօթ կը համարէ եղեր յայտնել ուրիշ մը եւ կամ ցոյց տալ:

Ժամանակաւ Եւրոպացիք շատ հետազօտութիւններ ըրին ճշդիւ իմանալու համար թէ ուսկից ծագում առած է սոյն ախտը. եւ հետաքրքիր էին հասկնալ թէ արդե՞օք Սիֆիլիզը հին Ամերիկացւոց մէջ ալ կը տիրէր:

Պռազիւռ անուն Սարկաւազը իր Մեքսիկայի պատմութեան մէջ հետեւեալ տողերը կը յիշատակէ տուփական ախտի մասին, «Քրիստափոր Քոլոմպ դեռ չէր գտած Ամերիկան երբ բնիկ վայրենաց մէջ կը տիրէր Սիֆիլիզը Եւրոպացիք կը կարծէին թէ Գոլոմպոսի ընկերները այսինքն՝ նաւաստինները Ամերիկայէն բերին այդ՝ ախտը. եւ ասոր ճշմարտութիւն լինելուն կատարեալ համո-

գում գոյացուցած կըսէին . Երանի թէ Քրիստո-
ֆոր Քոլոմալ շիգտնէր Ամերիկան , որով մեր եր-
կիրը այդ ախտի վարակումն զերծ պիտի մնարու
իսկ եթէ Ամերիկայի բնիկները դառնալով հար-
ցնեն Եւրոպացւոց թէ Մենք ուսկի՞ց վարակուե-
ցանք , ասոր ի՞նչ պատասխան ունին տալու : Հստ
վկայութեան Պոազիւո Սարկաւագի Ամերիկայի
վայրենիք բոլորովին զերծ եւ մաքուր էին այդ
ախտէ , եւ երբ Քրիստոափոր Քօլոմալ այդ երկրի
վերայ ոտք դրաւ , քիչ ժամանակէն սկսաւ երեւան
գալ Սիփիլիզը բնիկ ժողովուրդեան մէջ :

Եթէ Գաղղիական ախտը միջին դարու ժա-
մանակներն ալ գոյութիւն ունէր շատ հաւանական
է որ բորստութեան հետ խառն՝ Ելեփանդական
բորստութիւն , (Elephantiasis) խառնուրդ մը պի-
տի լինէր , վասն զի տասն եւ չորս երրորդ դարու
վերջերը սկսաւ խօսուիլ Սիփիլիզի վրայ , ճշմարիտ
ապացոյց մը ի ձեռն ունենալու համար հետեւեալ
պատմական դէսքը յառաջ կը բերեմք : 1492 թու-
ականին Ֆուանսացւոց Նարօլիթաններու դէմ ըրած
արշաւանաց ժամանակ , հարաւային Իտալիոյ մէջ
առաջին անգամ լինելով բժշկաց ուշադրութիւնը
զրաւեց , եւ սկսան հրապարակել թէ նոր ախտ
մ'երեւան ելած է , որուն բնութիւնը եւ նմանու-
թիւնը խոշոր ծաղկախտի կը նմանէր . Իտալացիք
սկսան կծու ակնարկութիւններ ընել Ֆուանսացւոց
առարկելով թէ նոքա պատճառ եղած են տըռ-
փախտի տարածման , եւ յիրաւի ալ իրաւունք ու-
նէին ըսելու , վասն զի Ֆուանսացւոց Իտալիոյ հողի

Գրայ ոտք դնելէ առաջ երբէք չէր պատահած այդպիսի դէպք մը, նոյն ատեն, Խոալացի բըժիշկ այդ նոր հիւանդութեան «Թուանսական ախտ» անունը տուին, եւ այսօր ամէն ազգ նոյն անուամբ կը յորդորջեն: Խոալիոյ վարակմանէ վերջ ար շատ ժամանակ չանցաւ, Սիփիլիզը յայտնուեցաւ ի Գերմանիա, Տալմացիա եւ ամբողջ Մակեդոնիա, սոյն երկրաց ժողովուրդի ամեն դասակարգի եւ ամեն խաւերու մէջ սկսաւ հետզհետէ երեւան գալ, սաստիկ կերպիւ ճարակելով բազմաթիւ ընտանիքներ, ի Գերմանիա ազնուական գասակարգի պատկանող քսան հոգիէ բազկացեալ ընտանիք մը ամբողջութեամբ վարակուեցան քիչ ժամանակի մէջ, այն տեղ ալ բժիշկները լուրջ ուշադրութեան առին եւ ազդարարեցին ժողովրդեան որ զգոյշ կենան, բժշկական քննութենէ վերջ խորհրդակցութեամբ եկան այն եզրակացութեան թէ նոր ծագած հիւանդութիւնը փոխանցիկ է եւ միանգամայն վտանգաւոր:

Տասն եւ հինգերրորդ դարու սկիզբները Մօրաւիոյ Պրիւն քաղաքը հաւաքուած էին շրջակայ գիւղօրէից բազմաթիւ բնակիչք Համբարձման տօնի առթիւ, նոյն ժամանակները թէ քաղաքացւոց եւ թէ գիւղացւոց մէջ սովորութիւն կար կոտոշով (Պույնուզ) արիւն քաշել, եւ լուացուիլ բազնեաց մէջ, նոյն օրը որքան մարդիկ որ երկսեռէ արիւն առնել տուած էին 15 20 օր վերջ ամենուն ալ մարմնոյ վրայ ծաղկախտի նման վերքեր երեւան և լած էին, եւ գիշերները սաստիկ ցաւ կըզգային

ռակորներնուն մէջ։ Սոքա դիմելով բժշկաց դար-
մանի սնդիկի սպեղանիով (Onguent Mercurielle)
չփեցին իւրեանց մարմնոյ մի քանի կողմերը եւ
քիչ ժամանակի մէջ գիշերային ցաւերէ եւ վերքերէ
ազատելով դարմանուեցան։ Սոքա վարակուած
էին արիւն առնող վարպետի գործածած կոտոշ-
ներէն, զոր նախապէս գործածած էր Սիֆիլիզէ
վարակուած անձի մը վրայ։

Սա եւս անուրանալի ճշմարտութիւն մ'է թէ։
Սիֆիլիզը տասն եւ եօթերրորդ տարիէ ի վեր իր
զօրութիւնը տկարացած է, իւր ծագման ժամա-
նակէն հետզհետէ Վիրուսը այսինքն թունաւոր
ժահը մարդկային սեռի վրայ իր ներգործութիւնը
եւ սաստկութիւնը տկարացած է չնորհիւ առող-
ջարանական օրինաց եւ բժշկաց դարմաններու։



ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴ.



ՄԻՖԻԼԻՉԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ

Այսօր աշխարհիս բոլոր կողմերը տարածուած
է Սիֆիլիզը իրրեւ սովորական եւ աննշան մի
հիւանդութիւն, աշխարհիս որ անկիւնն ալ զըտ-
նուիս անդ պիտի աեսնես հիւանդանոցաց արձա-
նագրութեանց մէջ Գաղղիական ախտի ամեն տե-

սակները։ Եւրոպիոյ մի քանի գլխաւոր գաղաքաց
մէջ պիտի գտնես աւելի նուազ վարակեալներ .
իսկ կան այնալիսի երկիրներ որ սաստիկ կերպիւ
յառաջացած է , կան նաեւ վայրեր որ շատ նուազ
են։ Պայթիկ եւ Հիւսիւսային ծովու եզերքները
Խոլանտական կղզեաց մէջ շատ աննշան էր Սիփի-
լիզը , իսկ երբ սկսան ֆուանսական եւ Հոլանտա-
կան նաւեր այդ կողմեր շրջագայիլ վարակումը ալ
աւելի եղաւ ., եւ ասոր պատճառը նոյն տեղի ժո-
ղովրդոց օտարներու հետ յարաբերութիւն ունե-
նալը եղաւ։ Տօգթոր Ռոպէրթ սոյն յարաբերութեանց
պատճառաւ Սիփիլիզի եւ զանազան Արիոդիտա-
կան հիւսանդութեանց աւելնալը կը տեղեկագրէ։

Նորվեկիոյ մէջ աւելի նուազ է սոյն ախտու։
Բրօֆիէսէռ Տօգթ . Պօէք իւր վկճակագրական
տեղեկագրոյ մէջ ցոյց կուտայ թէ Քրիսթինիոյ
ժողովուրդի մէջ շատ վարակեալներ կան Սիփի-
լիզէ , որոնք աւելի ոսկերաց եւ զվարու ցաւերով
կը տառապին , եւ մեծ մասսամբ կը մեռնին։

Ռուսաստանի մէջ եւս Տովիախտը տարածուած
է հիւսիսային Ռուսիոյ բոլոր քաղաքաց ժողովուր-
դի մէջ , իսկ Սիպերիոյ ժողովուրդը սաստիկ կեր-
պիւ վարակուած է սոյն ախտով։

Անգլիոյ պաշտօնական վիճակագրութենէ կը
տեղեկանամք թէ , այն տեղի ժողովուրդն ալ զերծ
չէ վեներական ախտէ , Բրիտանիոյ մէջ 10,000 էն
աւելի հասարակաց կիներ կան , այս պատճառաւ է
որ հիւսանդութիւնը առատ կը լինի , այսինքն մէկ
տարւոյ մէջ 1,652,500 , հոգի կը վարակուին Սի-

Քիյիգէ . 1885 թուականին տեղական զօրքերէն 1000 հոգւոյ մէջէն 313 հոգի կը վարակուին :

Ֆրանսաի ծովեզերեայ քաղաքաց մէջ Սիֆիշիզը աւելի շատ է որչափ որ ոչ ծովեզերեայ քաղաքները , իսկ զօրաց մէջ աւելի նուազ են 1889ին 1000 զօրաց մէջէն միայն 75 հոգի վարակունցան . իսկ 1892 թուականին հազար հոգին 62 . սոյն հաշւով եթէ բաղդատենք Անգղիական եւ Ֆրանսական զինուորաց իրարմէ տարբերութիւնը ըսել է և անգամէն աւելի պակաս կը վարակուին Ֆրանսական զինուորները Անգղիացւոց զինուորներէն , ինչ մեծ տարբերութիւն :

Պելճիոյ , Հոլանտաի . Տանիմարքաի եւ Զուիցերիոյ ժողովրդոց 100 ին 7—8 միայն կը վարակուին , իսկ Գուրմանիոյ եւ Աւստրիոյ ժողովուրդը 100 ին 5—6 միայն , սոյն վարակուածներուն մեծ մասը կը կազմեն Կայիցիոյ Հրեաները զոր նըշանաւոր են աշխարհիս մէջ իրենց անմաքրութեամբը :

Սպանիոյ եւ Փորթուգալի մէջ շատ նուազ է վինէրական ախտը , եթէ պատահի այդ ալ չնորհիւ զիմային չուտով կը դարմանուի դեղերու օգնութեամբ : Նոյնպէս Իտալիա եւ Յունաստան , իսկ Ռումանիա , սարսափելի կերպիւ ճարակուած է այդ երկիրը : Գլխաւորաբար Դանուբի ափանց վերայ գտնուած քաղաքացւոց մէջ , այս քաղաքաց մէջ եւս հասարակաց կիներ բազմոթիւ են , նա մանաւանդ Պուքրէշ կնոջ մը այցելող անձը առանց Ավիրողիտական հիւանդութեանց մէկ տեսակէն առնելու , չէ կարող մեկնիլ անկից :

Թուրքիա եւս զերծ չէ մնացած սոյն հիւանդ-
ութենէն, Փռքը Ասիոյ եւ Պաղեստինի մէջ Սիփի-
շիզը գրեթէ աննշան է. իսկ Վանայ եւ Կարսոյ
գաւառները ըստ բաւականին վարակուած կը հա-
մարուին, զիսաւորաբար Հայք որ անզիտակցարար
պատճառ եղած են սոյն ախտը արտասահմանի եր-
կիրներէն իւրեանց մարմինը թունաւորելով հայ-
րենիք վերադարձած ատեննին միատեղ տարած
եւ ուրիշներու ալ վարակուելուն պատճառ եղած
են, պէտք գիտնալ որ Հայ պանդուխտ մշակները
մեծ դեր կը կատարեն Սիփիլիզի փոխադրման եւ
տարածման մասին, նոքա ընդհանրապէս Ռօմա-
նիոյ Սուլինա, Կալաց, Խարայիլ, Քէօսթէնձէ եւ այլ
քաղաքներու մէջ կաշխատին եւ անպատիւ վայրեր
այցելութիւններ ընելով կ'ախտաւորուին, առանց
արմատական դարմանի, անհոգ եւ անտարրեր կը
վերադառնան իւրեանց ընտանեաց գիրկը, եւ ա-
հա քիչ ժամանակէն սիփիլիզը երեւան կելլէ անոր
կնոջ, զաւակաց մարմնոյ վրայ, մէկ խօսքով իւր
ամբողջ ընտանիքը Վէնէրական ախտով կը վա-
րակուի: Այս առթիւ Օսմ. բարեխնամ կառավա-
րութիւնը չի զլանար իւր մարդասիրական օգնու-
թիւնները ընել դէպ ի այդ ախտացեալ թշուառ-
ները, անմիջական կերպիւ բժիշկ, դեղ եւ ամեն
պիտոյք կը հոգայ ժողովուրդի առողջութեան եւ
օգտին համար:

Արարիոյ կողմերը ո եւ է Արքողիտական հի-
ւանդութիւն հազուադէպ է. վասն զի օտար ազ-
գաց հետ շատ քիչ անգամ յարաբերութիւն կու-
նենայ ժողովուրդը.

Գալով Օսմանեան զօրաց մէջ սիֆիլիզը կը ալատահի 100 ին 2—3, չնորհիւ բժշկաց անխոնջ ալիսատութեան մինչեւ իսկ սոյն ախտէ մահուան դէպք անգամ չի պատահիր:

Պարակաստանի մէջ ալ նուազէ Տռփական հիւանդութիւնք:

Հնդկաց մէջ շատ քիչ ժամանակ է որ յայտնուած է օտար ազգաց հետ յարաբերութիւն ունենալնուն պատճառաւ: Ճարոնցիք սիֆիլիզի «Քաղցրութեան կրակ» անունը կուտան:

Ովկիանիոյ մի քանի քաղաքաց մէջ միայն կը տիրէ Տռփախտը, ուր Եւրոպացիք կայցելեն եւ յարաբերութիւններ ունին:

Արդիկէի, Մարոքի եւ Ալմէրիոյ մէջ ժառանգական սիֆիլիզը կը տիրէ: Տօգթոր Տէլո իւր ուղեւորութեան յիշատակագրոյ մէջ կը նկարագրէ հետեւեալը: — « Զաեսայ նաևնը ոչ մի երկրի մէջ մարդկային սեռի այն թշուառութիւնը զոր ենթակայ եղած է Ալմէրիոյ ժողովուրդը: Գլխաւոր քաղաքաց փողոցներու մէջ շրջած ատեն պիտի տեսնես ժառանգական սիֆիլիզի դժբաղդ զոհերը իւր զանազան տեսակներով. փոքրիկ մանուկներ ի ծննդենէ երկու աչքի լոյսէ զրկեալ, տգեղ դէմք, առանց քթի, ամբողջ մարմինը վերքերով գոցուած, բերնի շրթունքները փտտած եւ անհետացած ուր միայն սպիտակ ակռաները կերեւին, շատեր կաղ, իսկ ումանք ալ առանց ձեռաց եւ ոտից մատներու. կարեկցութեան եւ գթութեան արժանի են նոքա »:

1844 թուականէն մինչեւ 1861 Եգիպտոսի Ա-ղեքսանդրիսյ քաղաքի հիւանդանոցի մէջ ընդուն-ուած է 8230 հիւանդ, որոց մէջ սիֆիլիզ հիւան-դութեամբ վարակեալ 589 հոգի նշած է, եւ ա-տոնցմէ միայն վեց հոգի մեռած։ Իսկ սոյն թուա-կանէն յետոյ հետզհետէ վարակեալներու թիւը փոքրանալով այսօր հազիւ հարիւրին մէկ կամ երկուք կարող ես գտնել. որչափ մեծ տարրե-րութիւն։

Հարաւային Ափրիկէի ժողովրդեան մէջ ալ կը գտնուին բաւական վարակեալներ, որոնք շատ դիւրաւ կը դարմանուին բարեխառն կլիմայի շնորհիւ։

Ամերիկայ, Մէքսիկա եւ Բարակուա Եւրոպացի գաղթական ժողովուրդի մէջ աւելի տարածուած է սիֆիլիզը, իսկ բնիկ ժողովրդը մասամբ գերծ կը համարուի սոյն ախտէն։ Ամերիկացի բժիշկ մը Տօքթ. Օասթէո կը խօստովանի թէ Գուտովայի ժողովրդեան կէսէն աւելին գաղղիական ախտով վարակուած է եղեր, այդ երկրի մէջ որ մուրացիկներ կը գտնուի 25,000 հազարէն աւելի բոլորն ալ վարակեալ եւ զնասուած են, այսինքն կոյր, կաղ, խուլ, համր, վերքերով պատած իրենց ամ-բողջ մարմինը, եւ ըստ տեղային սովորութեան այն անձը որ աղքատ է եւ սիֆիլիզէ վարակուած չէ նա իրաւունք չունի ժողովուրդի մէջ մտնել ո-ղորմութիւն խնդրելու։ Աշխարհիս այն ծովեզեր-եայ քաղաքները որ վաճառականական յարաբե-րութիւններ հաստատուած են, զանազան կողմերէ

Նաւեր եւ ճամբորդներ կը հանդիպին, այդ տեղեր աւելի տարածուած է հիւանդութիւնք:

Հասարակաց կանաքը եւս մէկ քաղքէ դէպի միւսը սիգիլիզը կը փոխադրեն. նոքա սոյն վտանգաւոր ախտի տարածման մէջ մեծ դեր կը կատարեն: 1560 թուականին Օրլէանի մէջ բազմաթիւ անձինք վարակուեցան հասարակաց կիներէն, (Femmes Publiques) - բժիշկք ամեն օր հաւաքուելով խորհրդակցութիւններ կընէին. եւ սոյն փոխանցիկ հիւանդութեան պատճառները կը խոզարկէին, վերջապէս այն եղրակացութեան եկանթէ՝ պէտք է հասարակաց կիները վանել երկրէն դուրս. բժիշկք փոխանակ վարակեալ կիները դարմանելու սոյն վճիռը տուին, եւ իւրեանց անմարդասէր ու սխալ վարմանց հետեւանքը շատ սարսափելի եղաւ. Օռլէանի ընդհանուր կառավարիչ Ֆէնէրալ Սթրոցի ձիշդ 300 հասարակաց կիները մէկ գիշերուան մէջ գետը նետել տալով ամենքն ալ խեղդուեցան. Սթրոցի կարծեց որ այլ եւս այդ կարգի կիներ ժողովուրդի մէջ չըպիտի յայտնուին, եւ ինքը յաջողած պիտի լինի սիգիլիզի առաջքը առնուլ. բայց շատ սխալեցաւ նաեւ շարաչար զղաց երբ տեսաւ որ յաջորդ տարին հասարակաց կիներու թիւը 800 եղած էր. դարձեալ շարունակեց իր հալածանքը դէպի ի անպատիւ կանանց, շատ բռնութիւններ բանեցուց որպէս զի ժողովուրդի իգական սեռը խորշի ու հեռի կենայ հասարակաց կին լինելք, բայց կիները որչափ կը հալածուէին եւ այնքան կը շատնային. ամենէն

վերջը ժէնէրալ Սթրօցի իր բոնած ընթացքէն յաղ-
թահարեալ. վերջին հրահանգ մը տուաւ ժողո-
վուրդեան թէ՝ ով որ հասարակաց կին է նա պար-
տաւորեալ է իր յատուկ տարազը ունենալ, այ-
սինքն եռագոյն շրջազգեստ հագնի եւ նոյն գոյնով
կարմիր գեղին եւ կապոյտ լայն ու երկայն ժա-
պաւէններով գիսակները կապեն, սոյն հրամանի
երկրորդ օրը հասարակաց կանայք Սթրօցիի հրա-
հանգի համեմատ ձեռնարկեցին իրենց համար
նշանակուած նորաձեւ տարագի պատրաստու-
թեան, եւ ահա մի քանի օր վերջ առաւօտ մը
երկու գեղեցիկ կիներ ձեռք ձեռքի տուած կանց-
նէին ընդհանուր կառավարիչ ժէնէրալ Սթրօցիի
ապարանքի առջեւէն նոյն վայրկենին Սթրօցի կը
գտնուէր իր պաշտօնատեղին, եւ իւր կինը ու
դեռահաս աղջիկը պատուհանը կեցած կը դիտէին
փողոցէն անցնող նոր տարազով զգեստաւորեալ
երկու կանանց, առանց գուշակելու եւ գիտնա-
լու թէ այդ հրապուրիչ եռագոյն զգեստը միմի-
այն անպատիւ կանանց համար յատկապէս որո-
շեալ է հագնիլ. պատուհանէն հեռանալով մայր
եւ աղջիկ գնացին իրենց դերձակտւույց եւ մի քանի-
ժամուան մէջ պատրաստել տուին մէկ մէկ ձեռք
շրջազգեստ, երեկոյին Սթրօցի տօւն վերադառնալէ
առաջ սոքա զգեստաւորեցան սոյն գրաւական տա-
րազով. երբ ժէներալը տուն վերադառնալէ իր դէմը
տեստւ իւր կինը ու աղջիկը որ հասարակաց կինե-
րու համար իր հնարած յատուկ տարազով զգես-
տաւորեալ էին. նա բարկացաւ եւ իր կնոջ բացատ-

բեց բոլոր եղելութիւնը անպարկեշտ կանանց առթիւ, այս անգամ նա վճռեց որ այլեւս չի պարապի անպատիւ դասակարգի պատկանող կանանց խընդիրով, եւ հրաման մը տուաւ որպէս զի արգիլուի այդ ձեւ տարազը:

Այսպիսով վերջացաւ Օրլէանի կառավարիչ ժէնէ. բաւ Սթրօցիի արշաւանքը ընդդէմ հասարակաց կիներու:

Մինչեւ 1820 թուականը Ռօմաի հասարակաց կիները պարտաւորեալ էին յատուկ տարազով շրջագայիլ, որպէս զի կանացի յատուկ ամօթխածութիւնը զգալով սոյն անբարոյականութենէ յետ կենային, բայց այդ կարգի կիներ անտարբեր կերպով ժողովուրդի ամեն խաւերուն մէջ կը մտնէին ու կելլէին առանց ամօթոյ եւ պատկառանքի: Շատ երկիրներու մէջ հասարակաց կանանց արգելքի խնդիրը գրաղեցուցած է առողջաբանական ժողովներու անդամները. բայց մինչեւ ցարդ ոչ մի ազգ յաջողած է իր մէջէն վերցնել զանոնք բոլորովին, բայց Եւրոպիոյ այլ եւ այլ կողմերը բարեկարգած են սոյն խնդիրը. Այսօր Գերմանիոյ մէջ եղած հասարակաց տուներու դռնէն մտած ատենդ կը տեսնես պատէն կախուած ահագին սեւ տախտակ մը որուն վրայ նշանակուած է այն տեղ գտնուող կանանց անունները եւ մականունը. իւրաքանչիւր անուան դէմ գրուած է «Առողջ» եւ կամ «վարակուած», բառերը. որ յատկապէս շաբաթը երկու անգամ պաշտօնական բժիշկի կողմանէ կիները կը զննուին, եւ բժիշկը ինքը կը գրէ այդ «Առողջ կամ հիւանդ» բառերը եւ կստորագրէ:

Ռուսաստանի եւ Ռումանիոյ մէջ հասարակաց կիները ամեն ամիս իրենց յատուկ տուրքը վճարելով, կառավարութեան կողմանէ մէկ մէկ տետրակ կը տրուի իւրաքանչիւր կանանց, եւ շաբաթը երկու անգամ բժիշկը կը զննէ ու այդ տետրակի մէջ կնոջ հիւանդ կամ առողջ լինելը կը նշանակէ. երբ մէկը այցելէ կինը պարտաւորեալէ իր անունը եւ մականունը կրող տետրակը ներկայացնել այցելուին, այդ կարգի կիները կատարեալ իրաւունք ունին փոխադարձաբար այցելուէն պահանջել անոր առողջութեան համար վկայագիր :

Սիֆիլիզը զմարդ վարակելու համար եփեք միջոց կայ ըսինք. այսինքն մերձաւորութենէ եւ առանց զուգաւորութեան եւ երրորդը ժառանգական կը լինի, որ առաջնէն եւ երկրորդէն աւելի սարսափելի եւ վտանգաւոր է :

Սոյն ախտը երեք աստիճանի կը բաժնուի. իսկ ոմանք ալ չորսի կը բաժնեն : Առաջին աստիճան կը համարուի այն ատեն երբ ախտը վարակեալէ մը կը փոխանցի կամ կը պատուաստուի բողորովին առողջ մէկու մը, այսինքն Տոփական թունաւոր ժահրը մարդուս առողջ ո եւ է անդամին դպչելով փոքրիկ պալար մը կը յայտնուի եւ այդ պալարը կը մեծնայ. սոյն պալարը յայտնուած օրէն մինչեւ 35 օր կամ 6 շաբաթ հիւանդութիւնը կը համարուի առաջին աստիճան Տոփախտի (Syphilis primitive): Մենք այժմ թողունք սիֆիլիզը չորս աստիճանի բաժնել եւ սկսինք երկրորդ աստիճանէն համարելով զայն առաջին աստիճանը :

Ա. աստիճան կը համարուի այն՝ երբ մարմնոյ ու եւէ մէկ մասը վարակուելով վէրք մը կամ պալար մը կը յայտնուի :

Բ. աստիճան կը համարուի երբ կոկորդի ցաւ կսկսի ու հիւթային խոյլանման ուռեցք մը (ganglion lymphatique) կը յայտնուի ծնօտին վարի երկու կողմերը, եւ քիչ օրէն կ'սկսի մարմնոյն վրայ երեւիլ կարմրագոյն պալարներ որ եթէ բժշկական դարմանը ուշանայ այդ պալարները վէրքի կը փոխուին :

Գ. Աստիճան կը համարուի այն ատեն երբ սոյն վէրքերը շատնալով վարակեալի ամրողջ մարմինը կը զրաւեն, վէրքերը կ'սկսին խորումկնալ ու մեծնալ. եւ միեւնոյն ժամանակ հիւանդութիւնը ներքին գործարանաց ալ կը վնասէ, ու վնասակար հետքեր կը թողու :

Առաջին աստիճանին յայտնուող պալարը կեղցաւ(1) (chancre) կը կոչուի. շանքրը բառը լատիներէն է. cancer (քաղցկեղ) բառէն առնուածորովնետեւ կեղցաւն ալ քաղցկեղի նման կայլանդակէ մարմնոյն առողջ մասը ուր որ կը յայտնուի :

Երկու տեսակ կեղցաւ կայ, առաջինը անզօր եւ կակուղ շանքըն է (chancré mou). իսկ երկրորդը կարծր շանքը (chancré induré) եւ կամ սիֆիլիթիքական կեղցաւ. սոյն երկու տեսակ շանքըներ մինչ քիչ ժամանակներ առաջ իրարմէ չ'էր գանազանուէր, եւ ով որ ենթակայ կը լինէր ան-

(1) Կեղցաւը ափրատակեղ ալ կը կոչուի եւ միեւնոյն նշանակութիւնն ունի :

միջապէս վճիռ կը տրուեր թէ Գաղղիական ախտէ , բայց չնորհիւ Տօգթոր Ռիքօրտի նա ցոյց տուածէ է սոյն երկու տեսակ շանքրըներու իրարմէ տարբերելու նշանները , այսինքն մին կակուդ , իսկ միւսը կարծր կը լինի . շատեր ալ մինչեւ հիմայ կը կարծեն ու կը պնդեն թէ այդ երկու տեսակ պալարներու թունաւոր ժահրը (virus) միեւնոյնն են . ասի բոլորովին սխալ կարծիք է :

Մարդս իւր մարմնոյն ամեն կողմը կրնայ ափրոտակեղի պալարներ ունենալ , բայց առաջարակարան արանց եւ կամ կանանց ծննդական գործարանաց վերայ կը պատահի վասն զի այդ անդամոց մորթը նուրբ եւ բարակ է , եւ այդ պատճառաւ է որ սիֆիլիզի ժահրը այդ նուրբ մորթէն ներս մտնելը վարեան կը խառնուի եւ կը վարակէ զմարդ : Կակուդ շանքրը ամեն անգամ մարմնոյ թոյլ եւ կակուդ մասին վրայ կը յայտնուի , եւ նոյն տեղը մնալով ուրիշ կողմ չի փոխադրուիր . իսկ կարծր շանքրը ամբողջ մարմինը կը ճարակէ մեծամեծ վնասներ պատճառելով : Կակուդ շանքրը առհասարակ զուգաւորութենէն յառաջ կուգայ եւ կսկսի հետեւեալ կերպով . եթէ կինը ունի իր ծննդական գործարանաց վրայ շանքրի վէրքը , արական սեռի մշրձաւորութենէն 24 ժամէն սկսեալ առ առաւելն 3-4 օրէն արական անդամի վրայ պիտի յայտնուի կարմրութիւն մը , նախ այն կարմրութեան յայտնուած օրը կսկսի անհանգիստ կերպիւ քերուիլ որոյ շուրջը բորբոքում մը յառաջ կուգայ , երկրորդ օրը այդ կարմրութիւնը կը փոխուի եւ կը տես-

նուկի պալար մը որում արմատը արիւնալի է : Երբ-
րորդ օրը սոյն պալարի վերայ կը յայտնուի փոքրիկ
ուռեցք մը եւ իր մէջ ջրային պղտոր հիւթ մը
(sérosité louche), չորրորդ օրը սոյն ջրային հիւթը
կը լինի շարաւ (suppuration), հինգերորդ օրը
շարաւային ուռեցքը կը պայթի եւ կարծր հեղուկը
կը վագէ, եւ վեցերորդ օրը պալարը վերքի ձեւ
կ'ստանայ ու հետպհետէ կը մեծնայ, կը խորունկ-
նայ եւ կը լայննայ, վէրքը մոխրագոյն կը լինի :

Կակուղ շանքը երեք շրջան ունի .

Ա. շրջան . Հիւանդութեան յառաջանալը .

Բ. շրջան . Ուր որ հասած է անդ կը կենայ. եւ

Գ. շրջանը . Դարմանման եւ ապաքինման
շրջան կը կոչուի :

Առաջին շրջանը կակսի երբ պալարը կը հասուն-
նայ, կը պայթի ու խորունկնալով վէրք կը լինի,
իլրումն առաջին եօթնեկի . վէրքի մեծութիւնը կը
կը կրկնապատկի, երբեմն ալ կը պատահի նոյն
մեծութեամբ մնալ :

Երկրորդ շրջանի մէջ վէրքը ոչ կը մեծնայ եւ
ոչ ալ կը պղտիկնայ, սոյն անփոփոխ վիճակի մէջ
կը մնայ ամբողջ 2-3 եօթնեակ :

Երրորդ շրջանի մէջ վէրքը կակսի կարմրիլ . շա-
րաւ ալ եւս չի տեսնուիր վէրքի վրայ կը մաքրուի
ու կսպիանայ . (cicatriser) սովորական վէրքերու
նման :

Շանքը շարաւը ուրիշ պարզ վէրքերու շարաւէն
ու եւ է Փիզիքական տարբերութիւն . մը չունի,
ացի այն յատկութենէն ու ազդեցութենէն որ

մարդ կրնայ շանքրի շարաւով պատուաստուկլ եւ
ունենալ նոր շանքր մը :

Պէտք է գիտնալ նաեւ թէ պարզ շանքրէ վա-
րակուած մը այնչափ ցաւ չի զգար, կարծր շանքր
ունեցողք մեծ ցաւ եւ անհանգստութիւն կզգան :



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ



ՎԵՆԵՐԱԿԱՆ ԿՈՐԻԶ (Bubon Vénérique)

(Խընարարի)

Կորիզ (խըյարձըք) ըսուած հիւանդութիւնը
պէտք է համարել կակուղ եւ կարծր շանքրերու
հետեւանքը, կորիզը ընդհանրապէս մարդու երան-
քի (քասըք) երկու կողմերն կելէ, այնպիսի
վնասակար հիւանդութիւն մ'է որ մարդ ամիս-
ներով գերի կը լինի անկողնոյ եւ կը մնայ երկար
ատեն կաշկանդուած մինչեւ որ բոլորովին դար-
մանուի :

Ոմանք կը կարծեն թէ բժշկական դեղեր գոր-
ծածելէ առաջ կուգայ կորիզը. ասի բացարձակ
ժողովրդական նախապաշարմունք է եւ բոլորովին
սխալ կարծիք, սորա պատճառը անմաքրութիւնն

է, երբ մէկը իր արական անդամի վրայ ունեցած շանքը մաքուր չի պահեր անպատճառ կորիզ հիւանդութեան ենթակայ պիտի լինի, ասի հաստատելու համար հետեւեալ ճշմարիտ ապացոյցը ունինք, ինչպէս որ առողջ անձ մը վարակեալ կնոջ մը հետ կը զուգաւորուի եւ քիչ օր վերջ ինքն ալ կը վարակուի. նոյնպէս ալ իր արական անդամի վրայ ունեցած սիֆիլիթիքական վէրքի շարաւը իւր մարմնոյ առողջ մասին դպչելով կը պատուաստուի (Inoculation), ինչպէս որ ըսինք կակուղ շանքը կարծրէն մեծ տարբերութիւն ունի, առաջինը այնչափ փոխանցական յատկութիւն չունի որչափ որ վերջինը։ Եթէ Գաղղիական ախտի այսինքն կարծր շանքը շարաւը առնունք եւ ծաղկախտի շարաւի նման առողջ մէկը պատուաստենք. մի քանի շարաթ վերջը անպատճառ պիտի տեսնուի պատուաստեալի մարմնոյ վրայ Սիֆիլիզի երկրորդ աստիճանի ախտանշանները որով քիչ ժամանակէն ալ պիտի ունենայ երրորդ աստիճան Սիֆիլիզ։

Եւ այսպէս կորիզէ վազած շարաւը կը պատուաստէ իւր մարմնոյն առողջ մէկ մասը։

Երբ մարդ կարծր շանքը ունենայ 8—10 օր վերջ երանքի երկու կողմերը հիվթային (Lymphatique) ուռեցքներ պիտի յայտնուին, երբ մատներով շօշափուի այդ ուռեցքները կարծես թէ մատներուդ ներքեւ կաղին մ'ունիս ու կը գլուրես մատներով։

Սոյն հիվթային ուռեցքները շատ անդամ առանց թարախանալու կանհետանան դարմանի մի-

ջոցաւ : Շանքըէ վարակուող անձը ինչ սեռի աշ
որ պատկանի պէտք է զգուշանայ շատ քալեէ ,
ծանր աշխատութենէ եւայլն :




ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՐՈՐԴ




ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՇԱՆՔԵՐՈՒ ԻՐԱՐՄԷ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Երկու տեսակ շանքրերը իրարմէ զանազանե-
տր եւ ճանաչելու համար կրնայ հետեւեալ փոր-
ձով իմանալ թէ իւր ունեցած շանքը ո՞ր տեսա-
կէն է . պալարի շարաւէն ասեղով մ'առնուլ եւ իւր
մարմնոյն մէկ կողմը . օրինակի համար սրունդին
կամ բազին վրայ սոյն ասեղով պատուաստել .
եթէ իր ունեցած շանքը կակուղ տեսակէն է մի-
քանի օր վերջ պիտի յայտնուի նոյն տեղը փոքրիկ
մի պալար, իսկ եթէ ոչինչ չըյայտնուի ասի ա-
պացոյց մ'է որ իւր ունեցած հիւանդութիւնը
Գաղղիական է . վասն զի արդէն իւր ամբողջ մար-
մինը վարակուած է սիֆիլիզով : Շատ տեղեր սոյն
փորձը կը կատարեն : Հստ ոմանց վնասակար կը
համարուի . վասն զի մէկի փոխարէն երկու վէրք
պիտի ունենայ :



Երկրորդ աստիճան սիֆիլիզով վարակեալ
(Syphilis Secondarie)



Երբեմն պատահած է որ կակուղ շանքը սի-
ֆիլիզի նշաններ ցոյց տայ, շատեր չընդունելո-
կըսեն թէ կարծր շանքը կակուղ շանքըն չիկա-
րենալով զանազաննել սոյն կարծիքը կը յայտնեն,
բայց մենք հաստատապէս կը հաւատանք թէ
մարդ մը կրնայ վարակուիլ երկու տեսակ շանք-
րով (Chancre Mixte) մէկէն ի մէկ . եւ անմիջա-
պէս վարակեալի վրայ կը տեսնուի սիֆիլիզի երկ-
րորդ աստիճանի ախտանշանները : Իսկ ոմանք ալ
կուզեն հաւատալ թէ կարծր շանքը վարակեալի
մը վրայ Սիֆիլիթիֆական նշաններ չեն երեւիր,
ասի բոլորովին անընդունելի է, այդպիսի պարա-
գայի մէջ կրնայ մարդ խարուիլ կակուղ շանքը
կարծր տեսակը ճանաչելով, սաստիկ կերպիւ կը
բորբոքի եւ այդ բորբոքումէն յառաջ կուգավ
կարծրութիւն մը . եւ ահա այս է որ առիթ կու-
տայ մարդոց զանազան կարծիքներ յայտնելու :


Առ հասարակ կարծր շանքը մէկ տեղ մը կը
յայտնուի . իսկ եթէ մի քանի տեղ ելլէ այդ կը լինի
ամէնքը մէկ . եւ ոչ թէ կակուղ շանքըն նման աս-
տիճանաբար :

Կարծր շանքը, եւ Տոփախոփի ժահը էրիկ
մարդոց արական անդամի ծայր մաշկի (Prépuce)
ներքին եւ արտաքին կողմը կը յայտնուի սովորա-
բար, իսկ կանանց իգամուտքի ներքին շրթանց
վրայ կը լինի :


ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՏՈՓԱԽԾԻ (Syphilis
Secondaire). — Երբ Տոփախոփի երկրորդ աստի-
ճանի յատուկ ախտանշանները կը տեսնուի վա-

ռակեալին վրայ, ալ հիւանդութիւնը իր կատա-
բելութեան հասած կը համարուի. ախտաւրեալի
վիճակը դառն կը լինի. հետզհետէ եւ ամենայն
արագութեամբ կը յառաջանայ հիւանդութիւնը.
ամբողջ մարմինը, արիւնը ու ներքին գործարան-
ները թունաւորուելով իր կեանքը վտանգի մէջ կը
գտնուի, այսինքն սաստիկ կը նիհարնայ, դէմքը
կը դեղնի եւ կմախքի նման կը չորնայ, ձեռաց
եւ ոտից ոսկորները կը ցաւին, որոց սաստկու-
թենէն չէ կարող քնանալ, կոկորդին եւ երանքին
երկու կողմերը հիւթային ուռեցքները կըսկին,
մինչեւ 40 աստիճան ջերմութիւն, ամբողջ մարմ-
նոյն վրայ փոքրիկ պալարներ եւ վէրքեր կը յայտ-
նուին, այսն վէրքերուն սիֆիլիս (Syphilide) ա-
նունը կը տրուի, եւ երկու աստիճան ունի, սաս-
տիկ (Aigue) ու հինցած (Chronique) Սիֆիլիսի
(Սիֆիլիթիք վարդախտ) առաջին ախտանշանները
յայտնուելէ 3 - 6 շաբաթ վերջը մարմնոյն վրայ
տեղ տեղ կարմիր պալարներ դուրս կուտայ ար-
ծաթ կէս ֆրանքոց դրամի մեծութեամբ, սոյն
պալարները մարմնոյ հինգ մասերուն վրայ կը
յայտնուին, կուրծքին, կռնակին, բազկաց, ոտից
եւ դէմքի. եւ երբ բժշկական դեղերով դարման-
ուի սոյն պալարներու եւ բիծերու կարմրութիւնը
հետզհետէ անհետանալով պղինձի գոյնի կը փոխ-
ուի :

Սոյն ախտանշաններէն զատ տարբեր կերպով
պալարներ ալ կը յայտնուին ամործիքներուն եւ
ստքերուն վրայ ոսպի ձեւով եւ նոյն մեծութեամբ.



Երրորդ աստիճան սիֆիլիզով վարակեալն
(Syphilis Tertiaire)



սոյն պալարք վէրքի փոխուելով կը տարածուին
ծննդական գործարանաց վրայ . Սրբանի (Anus)
բոլորտիքը , բերանը եւ կոկորդը , եւ տռփախտի
երկրորդ աստիճանը կը վերջանայ հիւանդի գըլ-
խուն մազերը ամբողջապէս թափելով (Alopécie) :

Երբեմն մարդուս մարմնոյ այլ եւ այլ մասերուն
վրայ կը յայտնուի տեսակ մը պալարներ եւ կամ
վէրքեր որոնք շատ նմանութիւն կունենան սի-
ֆիլիթիքական վէրքերու , այսպիսի պարագայի մէջ
պէտք է դիմել բժշկի մը ապահով լինելու համար
թէ Գաղղիական ախտով վարակուած է թէ ոչ :

Գէտք է զիտնալ նաեւ թէ (Սիֆիլիթիքական)
պալարները եւ վէրքերը երբէք չեն քերուիր :

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՏԻՓԱԼԵՏԻ (Syphilis Tertiaire). — Երբեմն Տռփախտի երրորդ աս-
տիճանը շուտով կը հասնի , իսկ շատ անդամ ալ
հիւանդին բնութեան եւ ֆիլիքական առողջու-
թեան պատճառաւ երկար ժամանակէ յետոյ երկ-
րորդ աստիճանը՝ իր շրջանը աւարտելով երրորդ
աստիճանին կը հասնի :

Սիֆիլիզի Երրորդ աստիճանի թողած հետքերը
եւ բազմաթիւ երեւոյթները ամենասոսկալի կը
լինին ընդհանրապէս ; եւ երբ սոյն վիճակի են-
թարկեալ մէկու մը կը հանդիպիս եւ կամ կը
տեսնես անկարելի է որ սոսկում չի պատճառէ
մարդուս :

Երբեմն Անդամալոյժ (Paralysisie) կը լինի մարդ
երբեմն մարմնոյն վրայ կը լինին խոր եւ անդար-
մանելի վէրքեր . փտումն ոսկերաց (Carie) եւ շատ

անգամ ալ գանկը եւ գլխի ոսկերաց այլ եւ այլ
մասը կը փտտին, այս վերջին շրջանի մէջն է որ
վարակեալի բերնին առաստաղը կը ծակի, քիթը
ամբողջութեամբ փտելով կանհետանայ, ու այսպէս
կայլակերպի ամենադեղեցիկ երիտասարդի մը դէմ-
քը։ Տիւ եւ գիշեր իր զգացած ցաւերէն անհան-
գիստ կը չարչարուի, բերանը լեզուն եւ կոկորդը
կը լեցուի գարշահոտ վէրքերով, ուղեղն ալ զերծ-
չի մնար այդ տեսակ վէրքերէն որով հիւանդը
անյիշողութեան մատնուելով խելակորոյս կը լինի,
ամբողջ մարմնով կը դողայ, ոտքի վրայ կանգնիլ
անկարելի է, արեան ապականութենէ երակներն-
ալ կը խանգարուին, երակներու խանգարման-
պատճառաւ մարմնոյն այլ եւ այլ մասերուն ե-
րակը կուռենան (Varice Syphilitique) սրտի ե-
րակները եւս սոյն վիճակի կենթարկուին եւ ար-
եան շրջանի կանոնաւորութիւնը կը խանգարի, եւ
Անկվրիզմ (Anevrisme) հիւանդութեան ենթա-
կայ կը լինի, նիհարութիւնը օր ըստ օրէ կ'աւել-
նայ, հիւանդը ալ եւս չէ կարող չարժիլ անկող-
նոյն մէջ. վերջապէս աղիքները զնասուելով կը
ծակին ու անմիջապէս կը մեռնին։ Մի անգամ
մարդուս ներքին գործարանները չի զնասուի սոյն-
ախտէն. ալ եւս նա յոյս չունի ապրելու, վասն զի
մահը փութով կը հասնի վրայ ու կոշնչացնէ զմարդ։
Երրորդ աստիճան սիֆիլիզի որչափ ժամանակը
տեւողութիւնը չի գիտցուիր, երբ առանց բժշկա-
կան լուրջ դարմանի թողուի բնական է որ հի-
ւանդութիւնը կը յառաջանայ եւ մեծ վտանգնե-

րու կենթարկուի մարդ . կան վարակեալներ ալ ո-
րոնք մէկ երկու անգամ բժշկի երթալով որոշեա
գեղերը կը գործածեն ու բաւական օգուտ տես-
նելէ վերջ կը կարծեն թէ բոլորովին ապաքինած
են եւ սոյն ախտէն ազատած են , սիֆիլիզի են-
թակայ եղող անձ մը անհրաժեշտ պէտք ունի ար-
մատական դարմանի . առանց անոր նա չի կարծէ
որ իւր օձիգը ազատած է , ուշ կամ կանուխ նո-
րէն պիտի կրկնուի հիւանդութիւնը աւելի զօրա-
որ կերպիւ առաջինէն , շատ անգամ կը պատահի
որ 10—15 տարի վերջ դարձեալ երեւան ելլէ ,
ասի շատ վնասակար է , ուստի մինջեւ որ զինքը
դարմանող բժիշկը չի վստահացնէ որ բոլորովին
ապաքինած ու դարմանուած է նա պէտք չէ թո-
ղու դարմանը , մէկէն մինչեւ երեք տարի եւ եր-
բեմն աւելի , անընդհատ դեղ գործածելու է . որ-
պէս զի կարենայ ապահով լինել , կան երիտա-
սարդներ որոնք ամուրիութեան ժամանակ Գաղ-
զիական ախտի ենթակայ լինելով քիչ ատեն դար-
մանուելէ վերջ կամուսնանան , Սիֆիլիզը կը յայտ-
նուի ոչ միայն իր վրայ , այլ կնոջը եւ զաւակաց
վրայ ալ իսկոյն կը տեսնուի այդ ախտը , եւ ինքը
պատճառ կը լինի անմեղներու թշուառութեան :
Այս կէտը պէտք է ուշադրութեան առնուի որպէս
զի ի վերջոյ չի զղան :

Նոքա որ ֆիզիքական կազմով նիհար եւ խո-
զախտաւոր (Scrofuleux) են . Սիֆիլիզը եւս ա-
ռաւել վտանգի կենթարկէ զանոնք , երբ վատա-
ռողջութեան ենթակայ մարդոց վրայ կը յայտնուի

առաջին անգամ Տոփախտի պալարը, հիւանդութիւնը իր ընթացքը անմիջապէս կը փոխէ եւ արագապէս աստիճանները մին միւսի ետեւ կը յաջորդեն քիչ ժամանակի մէջ, այս կարգի անձինք շատ ուշ կը դարմանուկին :


Իսկ Փիզիքական կատարեալ առողջութիւն ունեցող անձ մը երբ կարծր շանքրի ենթակայ լինի, սորա դարմանումը արագ է, եւ աստիճանները երկարամիջոց կը լինին :

Ցուրտ եւ խօնաւ կլիմայ ուեցող երկիրներու մէջ սիֆիլիզը շատ վնասակար յատկութիւններունի, իսկ տաք կլիմաներու մէջ վարակեալ մը առաջին աստիճանէն երկրորդը կանցնի ու կը մնայ երկար ատեն. եթէ պատահի ալ որ երրորդ աստիճան ունենայ ասի բացառութիւն կը համարուի. եւ այդպիսեաց թիւը շատ աննշան է:

Սիֆիլիզէ վարակեալք զգուշանալու են արբեցողութենէ, ծանր աշխատութիւններէ, եւ ամեն Փիզիքական եւ հոգեկան անհանգստութենէ, կատարեալ առողջաբանութեան պայմաններով պէտք է ընթանալ այսինքն չուտել այն կերակուրները որ արեան բորբոքում կը պատճառեն, կանուխ անկողին մտնել եւ դարձեալ կանուխ ելել, թատրոն, պարահանդէս, եւ գիշերային զրօսավայրերէ հեռի մնալ, խորշիլ իգական սեռէ եւ բնաւ զուգաւորութեան փափաքը եւ ցանկութիւնը չունենալ, այս զգուշութիւնները եթէ ընեն մեծ օգուտներ կրնան ունենալ, եւ արդէն Ավրոդիտական հիւանդութեանց ենթակայ եղող մը պէտք կունենայ սոյն զգուշութեանց :



Երրորդ առտիճան սիֆիլիզով վարակեալն
(Syphilis Tertiaire)



Բժշկական երկար փորձառութիւններէ յետոյ հաստատուած է թէ սիֆիլիզէ ախտաւորեալ անձանց ոսկորները կը կակուղնան . առիթ ունեցած եմ 1883 թուականին Պուքրէշի Քօլց անուն հիւանդանոցի մէջ տեսնել զինւորութեան շրջանը աւարտող 30 տարեկան Ռոման մը որ երկու ամիսի չափ թոքատապէ (Pneumonie) կը տառապէր . վերջին օրը երբ բոլորովին ապաքինած հիւանդանոցէն կը մեկնէր հիւանդանոցի արտաքին դրան սանդուղներէն իշնելու ատեն որ երկու ոտք մնացած էր դեռ, յանկարծ ոտքը սահելով կիյնայ եւ աջ ոտքի սրունքը կը կոտրի . խեղճ մարդը իրբեւ նոր հիւանդ կրկին արձանագրուելով հիւանդանոցի մայր տօմարի մէջ կը դրուի վերաբուժական սրահը, կոտրած ոտքը երեք ամիս շարունակ բռային (Gypseux) կապերով փաթաթուած անշարժ մընաց, ոսկորը առանց հաստատ իրարու միանալու նոր կոտրուածի նման կը մնար, հիւանդանոցի բժշկապետը զարմանալով ամբողջ իր ստորադաս բժիշկնեղը հաւաքեց եւ հիւանդին Սիֆիլիզ ունենալը յայտնելէ վերջ որոշուեցաւ որ հիւանդին սնդիկի (Mercure) դեղահատեր տրուի (Pilule de Ricord) տամ եւ հինգ օր սոյն դեղահատերով դարմանուելէ վերջ կոտրած ոսկորը միացաւ եւ երկու շաբաթ վերջ հիւանդը մեկնեցաւ :

Ափրողիտական հիւանդութեանց մասնագէտ Անդղիացի բժիշկը՝ Տօգթոր Ռոկէ իր «Սիֆիլիզ» անուն դրբի մէջ կը նշանակէ հետեւեալ դէպքը . ի Լօնտոն թատրոնի մը մէջ երիտասարդ լարա-

Խաղաց մը տեսած է որ բեմի վրայ մալմամար-
զութիւն ըրած միջոցին երկու ոտից սրունքները
մէկէն ի մէկ կը կոտրի եւ երիտասարդը կը տա-
պալի գետին, անմիջապէս Տօգթոր Ռոկէի հի-
ւանդանոցը կը փոխադրուի ու կը հաստատուի
թէ սրնքաց ոսկորներուն կոտրելուն պատճառը
Սիֆիլիչն է եղած :



ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ




ԺԱՌԱՆՔԱԿԱՆ ՍԻՖԻԼԻԶ

(SYPHILIS HÉRÉDITAIRE)

Ինչպէս որ օրէնք է զաւակ մը իր ծնողաց
հարստութեան եւ ընչից ժառանգորդն է . նոյնպէս
ալ իւր ծնողաց ենթակայ եղած այդ սոսկալի ախ-
տին միակ ժառանգորդն կը լինի դեռ իւր մօր
արգանդին մէջ եղած ժամանակ . եւ աշխարհ գա-
լին անմիջապէս վերջ ալ պիտի վայելէ այդ անիծ-
եալ ժառանգը . ոմանք ալ խորշակէ զարնուած
խակ պտուղի նման վեցերորդ եւ կամ եօթներորդ
ամսոյ մէջ կը վիժին եւ կոչնչանան առանց լցո
տեսնելու . այս վերջինք աւելի բաղդաւոր են
առաջիններէն, վասն զի երբ երեխան իւր իննամն-



ԺԱՄԱՆԱԿԱԿՅՈՒՆԻ ՍԻՖԻԼԻԳՆՎ ՎԱՐԱԿԵԱՎ ՆՈՐԱԾՅԻՆ ԲԱՆԱԿ
(Syphilis Héréditaire)



Եայ բանտարկութեան շրջանն լրացնելով աշխարհ կուգայ անպատճառ իւր մարմնոյ վրայ բացայայտ պիտի տեսնուի սիփիլիզի կնիքը . երբեմն ալ կը պատահի որ առանց սոյն նշանը ունենալու առողջ երեխայի մը նման աշխարհ կուգայ եւ մի քանի եօթնեակ վերջ գաղղիական ախտի նշանները կը յայտնուին :

Ժառանգական սիփիլիզով վարակեալ երեխայից նախ քիթերնին կը գոցուի եւ չնշառութիւնը միայն քերնէն կը լինի . պառաւ. կանանց նման մերթ ընդ մերթ կը փոնգտան, կանցնին մի եօթնեակ եւ ահա երեւան կուգան երեխային բերնին մէջ, ականջներուն եւ դէմքին վրայ ու Սրբանի (Anus) ժգերքները Սիփիլիզի վէրքեր, նորածին մանկան դէմքը փոխուելով ծեր եւ թառամեալ մարդու դէմքի կը նմանի, առջեւի ակուաները կը թափին եւ երկրորդ անգամ բնական ակռաներ չեն երեւիր, սաստիկ կերպիւ կը նիհարնան. գիշերները չի կրնալով քնանալ իր զգացած ցաւերէն անդադար կուլայ, ձայնը կը մարի եւ քիչ ժամանակի մէջ իր ներքին գործարանները վտանգուելով ծնողացը մեղքերը անմեղ զաւակը կը քաւէ . ու շարաչար տանջանքներով կը մեռնի :

Ժառանգական սիփիլիզը առաջին աստիճան չունի, երկրորդով աշխարհ կուգայ եւ քիչ ատենէն երրորդ աստիճանին կը հասնի, իսկ չատանգամ ալ երրորդ աստիճանը իր վրայ աշխարհ կու գայ. ասոր բուն պատճառն ալ սա է թէ առաջին եւ երկրորդ աստիճանը իր մօր արգանդին մէջ կանցնէ :

Մնողաց սիֆիլիսը որչափ հիննայ (chronique) երախայի կեանքը վտանգէ ազատ կը մնայ :

Երբ մանուկ մը կը ծնանի բոլորովին առողջ եւ մի քանի ամիս եւ կամ տարի մը վերջ սիֆիլիթիքական ախտանշաններ կը յայտնուին անոր մարմնոյն վրայ , այն ատեն չենք կարող վճիռ արձակել թէ ժառանգական է , շատ հաւանական է որ իւր հօրմէն եւ կամ մօրմէն փոխուած լինի :

Վարակեալ մօր մը ծննդաբերութիւնը որչափ շատ կը լինի այնչափ ալ նպաստաւոր է վերջին ծնանելիք մանկանց համար :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՐՈՐԴ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՎԱՐԱԿՈՒԻ ՄԱՐԴ ՍԻՖԻԼԻԶԷ

Շատ անգամ մարդիկ Ավրողիտական հիւանդութեամբ կը վարակուին զուգաւորութենէ . Երբ կին մը իր ծննդական գործարանի վրայ կունենայ կակուղ եւ կամ կարծր շանքը . եւ այրը կը զուգաւորի . ու մի քանի օր վերջ ախաը կը յայտնուի արական սնդամին վրայ . հակառակն ալ կրնայ ըլլալ . այսինքն կինը բոլորովին մաքուր լինելով այրը նախապէս վարակեալ անխղճօրէն կնոշ կետ կը

գուգաւորի, եւ մեծամեծ աղէտներու պատճառ կը լինի :

Տռփախտի առաջին եւ երկրորդ աստիճանը տարափոխիկ լինելուն վրայ անկասկած ենք. իսկ երրորդ աստիճանի ազդեցիկ զօրութիւնը տկարանալով դժուարաւ ուրիշի մը կը փոխանցի, ասով կը բնանք եղրակացնել թէ տուփախտը իր նոր եղած ատեն թէ՝ զօրաւոր եւ թէ՝ ազդեցիկ է.

Բոլորովին առողջ կինէ մը մարդ կրնայ վարակուիլ. թէ ինչպէս. շանքը ունեցող անձ մը (առ հասարակ սոյն անխղճութիւնը արանց քով կը գտնուի) կը զուգաւորի առողջ կնոջ հետ եւ իր արական անդամի վերայ ունեցած վիրաց ժահը (թարախ) կը թողու կնոջ արգանդին մէջ եւ կը մեկնի, քիչ մը վերջ այդ հասարակաց կնոջ մի ուրիշը կայցելէ եւ առաջին յաճախորդի թողած ժահը կառնու եւ նա ալ կը մեկնի, մի քանի օր վերջ կինը կը վարակուի եւ իր պատճառաւ ալ շատեր վարակուելու դժբաղդութիւնը կունենան :

Առանց կնոջ հետ զուգաւորելու տարբեր կերպիւ ալ մարդ կրնայ վարակուիլ ափրողիտական ախտերով հետեւեալ կերպիւ. առէք այդ թունաւոր թարախը եւ առողջ մարդու մը ունեցած աննշան վէրքին. ձեռքի վրայ եղած ճաթութուկին եւ կամ փափուկ մորթին դպցուցէք. եւ չահա քանի մ'օր վերնին կամ կոկորդին մէջ սիֆիլիթիքական վէրքեր ունի. առողջ մէկու մը հետ զիրար կը համբուրեն. այս կերպով ալ կը տարափոխուի հի-

անդութիւնը . ուստի ով որ սոյն ախտին ենթակայ կը լինի յանուն մարդասիրութեան զգուշանաւու է այդ ձեւակերպութիւններէ . գլխաւորաբար իրենց շրթունքները պէտք չէ որ մօտենան փոքրիկ մանուկներու բերնին կամ երեսին , անհրաժեշտ է նաեւ վարակեալ անձանց ջուրի գաւաթը , կերակրոյ սեղանը եւ բոլոր անօթները զատ լինին : Երբեմն պատահած է որ բժիշկը եւ դայեակը երբ վարակուած կնոջ ծննդական գործարանը կը շշափեն (Toucher) նոքա եւս կը վարակուին սի . Փիլիպէ :

Պարտի զգուշանալ սակիրիչներու ածելիներէն . եւ բաղանեաց մէջ անմաքուր տեղեր նստելէ , վարակեալ մարդոյ անկողինը պառկիլ եւս վտանգաւոր է :

Բոլորովին զգուշանալ պէտք է՝ կարգ մը ինքնակոչ բժիշկներու եւ դայեակ կիներու պատուաստել տալ երախայները , որոնք Սիֆիլիզի տարածման մէջ մեծ դեր կը կատարեն տգիտաբար , գիտէք այդ կարգի պատուաստողներու ամենասոսկալի սովորութիւնները , բնականաբար պիտի պատասխանէք — ոչ , ուրեմն բացատրեմ , այդ կիները եւ ինքնակոչ բժիշկները որք սովորութիւննենին ծաղկախտի դէմ պատուաստել երեխայները . առնելով պատուաստական ժահրն տուփախտէ վարակեալ տղայէ մը եւ տանիլ ու պատուաստել ուրիշի մը առողջ տղուն , կամ երախային , պատուաստական ժահրն ափրոդիտական ժահրի հետմիանալով երկուքն ալ հաւասարապէս իրենց պաշ-

տօնը ի գործ կը դնեն, մին մարդուս կեանքը
մահառիթ վտանգէ կազատէ, իսկ միւսը մարդուս
կեանքը վտանգի կենթարկէ. ուստի ծնողը պա-
տասխանատուութեան ներքեւ չը մնալու համար
իրենց զաւակներնին թող պատուաստել տան
բժիշկի մը, այն ատեն պէտք է ապահով ըլլալթէ՝
նա միայն անասնային ժահրով պիտի պատուաստէ
տղեկն որ բոլորովին զերծ է ամեն պղծութենէ:
իսկ տգետ կանայք որ իրենց արհեստ ըրած են
եւ պատուաստի գործողութիւնն ի գործ կը դնեն
եւ մեծամեծ վնասներու պատճառ կը լինին, ուս-
տի պէտք է զգուշանալ անոնցմէ:

Շատ անգամ երկու ամուսիններ Ավրողիտա-
կան հիւանդութեսմբ վարակուած կը լինին. եւ
ահա այս առթիւ այր եւ կնոջ մէջ կըսկսի ընտա-
նեկան ներքին երկապառակութիւնը, կինը իր վա-
րակման պատճառ իւր ամուսինը կը բռնէ, իսկ
այրը կնոջ դէմ ատելութիւն կզգայ, այսպէս եր-
կար ատեն կուրօրեն զիրար դատապարտելէ վերջ.
յանցաւորը երեւան հանելու նպատակաւ ձեռք
ձեռքի կուտան եւ կը ներկայանան բժշկի մը.
բժիշկը կը գտնէ կնոջ վրայ առաջին աստիճան
Սիֆիլիզ իսկ էրիկ մարդու վրայ երկրորդ աստի-
ճանը, խնդիրը՝ կը պարզուի եւ յանցաւորը կը
յայտնուի, այսպիսով վերջ կուտան իւրեանց մէջ
տիրող երկապառակութեան եւ կըսկսին դարմանի:
Ուստի, այսպիսի պարագայից մէջ պէտք չէ որ
զիրար դատապարտեն. այլ, երկապառակութիւնը
թողլով դարմանի ձեռնարկելու են:



ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՐՈՐԴ



ՍԻՖԻԼԻՑԻ ԶՎԱՐԱԿՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ ՁԵՌՔ ԱՌԱԾ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Սիֆիլիզի փոխանցիկ հիւանդութիւն մ'ըլլալը
երբ բժշկաց փորձառութիւններով հաստատուե-
ցաւ . անմիջապէս վարակեալք կառավարութեանց
հսկողութեան տակ դրուեցաւ որպէս զի դիւրու-
թեամբ կարենան վարակման առաջքը առնուլ:
Նոյն ժամանակները ժողովուրդը անհամակիր
գտնուեցաւ բժշկաց եւ կառավարութեանց տընօ-
րինութեանց առթիւ . առանց հասկնալու , առանց
համոզուելու թէ Սիֆիլիզը այնպիսի հիւանդու-
թիւն մ'է որ անխնայ կերպով կը հարուածէ զմարդ ,
եւ թէ իր տարափոխիկ ազդեցութիւնը ի գործ կը
դնէ հարուստին եւ թէ ազքատին վրայ , առանց
սեռի եւ հասակի նայելու :

1655 ին Սպանիոյ մէջ կառավարութիւնը զրադ-
եալ էր սիֆիլիզի վարակեալներու խնդիրով ,
գաղտնի առողջարանական պաշտօնեայներ քաղա-
քաց ամեն կողմը կը շրջագայէին , ժողովուրդի
ամեն խաւերու մէջ կը մտնէին , եւ երբ վարակ-
եալ մը տեսնէին անմիջապէս ձերբակալելով կը
փոխադրէին Ասիրողիտական հիւանդութեանց հա-

մար յատուկ հիւանդանոցը , եւ բանտարկելով բռնի կերպով կը դարմանէին , սոքա առ հասարակ աղքատ դասակարգի կը պատկանէին , իսկ ազնուական եւ հարուստ վարակեալներ գաղտնի կերպով իրենց բնակարաններու մէջ կը դարմանուէին : Բժիշկը տեսնելով որ հիւանդութեանց առաջքը առնել անկարելի էր . եւ գիխաւոր պատճառ մը կար սիֆիլիզի տարածուելուն , կրկն եւ կրկին առողջաբանական ժողովներ կազմեցին եւ վերջապէս գտան սոյն ախտի տարածողները . սոքա հասարակաց կիներն էին , այժմ սկսան մասնաւոր չչնքի մը մէջ հետզհետէ բանտարկել այդ կարգի կիները եւ դարմանել : Մեծ օգուտներ ձեռք բերին . Մատրիտի մէջ 12 հազար վարակեալներէ 700 հոգի միայն մնացին եւ երկու տարուան մէջ ժողովուրդը ազատեցաւ վտանգէ . նոյն ժամանակի հրապարակագիրները սկսան գովել կառավարութեան ձեռք առած առողջաբանական միջոցները եւ գործունէութիւնը . ժողովուրդը հանդարտեցաւ եւ չնորհակալութիւն յայտնեց կառավարութեան :

Եւրոպիոյ ամէն կողմերը որ կային բազմաթիւ վարակեալներ , եւ ատոնց պատճառը հասարակաց կիներն էին , բժիշկը միանալով կառավարութեան հետ անոնց բնակավայրը այցելելով բժշկական գննութենէ կանցնէին որոնք որ առողջ էին կը մնային . իսկ որոնք որ վարակեալ կը փոխադրէին մասնաւոր չչնքի մը մէջ եւ կը դարմանէին , իսկ անդին հասարակաց վայրերը շարաթը երկու ան-

գամ կայցելէին եւ կիները բժշկական քննութեան կենթարկէին :

Կառավարութեանց ուշադրութիւնը եւ բժշկաց հոգածութիւնները մեծ օգուտոներ յառաջ կը բերէին ժողովուրդի բարութեան եւ առողջութեան համար, նախապէս սոյն դարմանները եւ հսկողութիւնները վերացական եւ անօգուտ բաներ կը համարէին, բայց երբ ամեն տեղէ ուրախութեան եւ գոհունակութեան ձայներ կը լառէին ժողովուրդեան մէջն . բժիշկք եւ առողջարանական պաշտօնեայք աւելի ջերմ սիրով գործունէութեան սկսան . եւ ամեն օր նորանոր օրէնքներ հաստատեցին Սիփիլիզի առաջքն առնելու, ամենէն աւելի հրատարակուած օրէնքները հասարակաց կանանց կը վերաբերէր . բժշկաց լուրջ ուշադրութիւնը արգոսի նման միմիայն կանանց վրայ յառած էին :

1830 թուականին Համպուրկի առողջարանական ժողովոյ որոշմամբ՝ հասարակաց կանանց բնակարաններու մէջ մէկ մէկ ծերունի կանայք դրուեցան, սոցա պաշտօնն էր այցելող յաճախորդի մարմինը զննելու. եթէ այցելուն վարակեալ էր անմիջառակէս սոյն վայրէն կը հեռացնէին, իսկ եթէ առողջ էր նա կարող էր ազատ մուտք ունենալ կանանց սրահը եւ իր ուղածին հետ առանցնանալ, այսպիսով կարող եղած են Տռվական հիւանդութեանց նուազ տարածման :

Հին ժամանակները Անգլիոյ մէջ բժիշկք մի քանի փորձեր ըրած են սիֆիլիզէ վարակեալ մարդոց

արեամբ առողջ մարդիկ պատուաստել բայց
ի վերջոյ տեսմելով որ սոյն փորձը ապարդիմ է
եւ փոխանակ օգուտ մը յառաջ գալու աւելի վնա-
սաբեր կը լինի մարդկային սեռի . կը դադրին սոյն
տեսակ պատուաստի գործածութենէ : Զմունանք
յիշել թէ՝ այս կերպ պատուաստ հնարող բժիշկը
իր վրայ եւս կատարել կուտայ գործողութիւնը եւ
ինքն ալ երբ կզգայ թէ վարակուած է . կը թողու :



ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԻՈՐԴ



ԱՓՐՈԴԻՏԱԿԱՆ (Syphilis) ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԴԱՐՄԱՆԸ

Երբ մարդումը արական կամ իգական ծննդա-
կան գործարանաց վրայ ո եւ է պալար մը եւ կամ
վէրք մը յայտնուի (կակուղ եւ կարծր շանքը) սո-
ցա դարմանը միեւնոյն է, նաև՝ մաքուր պահելու
համար վէրքը անհրաժեշտ է լուալ դաղը (ըլքը)
ջուրով եւ վէրքը մաքուր բամպակով ջորցնելով
վրան ցանել մի քիչ սնդիկի նախագլորաւոր (1) եւ

(1) Գեաք է գիտնալ որ Ափրոդիտական հիւանդութեանց
համար գործածուած բժշկական դեղերը առ հասարակ թունա-
ուոր են, ուստի ամեն անդամ պէտք է զգուշանալ և սոյն կարգի
դեղերը շօշափելէ վերջ ձեռքերը լուալու է վարակեալը :

կամ իօսօֆոռմի փոշի, ու օրը երկու անգամ լուար սոյն փոշիները չի ցանելց առաջ համեմաւոր գինիով եւ ջրով, վարակեալը պարտի մնալ իր տանը մէջ, եթէ առողջութեան ժամանակի պէս մինչեւ երեկոյ ճամբայ քայլ, ծանր գործերով զրադի հետեւանքը գէշ կը լինի :

Երբ երանքի (քասըք) երկու կողմերը ուռեցք յայտնուին առաւօտ եւ երեկոյ սնդիկի սպեղանիով (onguent Mercurielle) չփել յարկ է. եթէ սոյն ուռեցքները չանհետանան եւ ցաւը սաստկանայ անմիջապէս երկու թերթ բարակ լաթի մէջ կտափ հունտի ծեփելիք (Cataplasme de Graine de Lin) դնել այդ երանքի ուռեցիկներուն վրայ. եւ երբ հասուննայ վիրաբուժական գործողութիւննել տալով ուռեցքի մէջի պարունակութիւնը (թարախը) մաքրել եւ ճիշտ շանքը նման լուալ ու իօսօֆօրմի փոշի ցանել վրան. ասի այն հիւանդութիւնն է որոյ առթիւ մենք խօսեցանք նախապէս հինգերրորդ գլամի մէջ (Տես երես 36):

Դարերէ ի վեր բժշկական աշխարհի մէջ սովորութիւն՝ աւելի լաւ է ըսել օրէնք եղած է սիֆիլիզ ախտի դէմ թէ՝ ներսէն եւ թէ՝ դրսէն սնդիկ (mercur) գործածել. ասի մինչեւ այսօր կը գործածեն. բայց վերջերս առ հասարակ եւրոպիոյ մէջ Ավրորդիտական հիւանդութեանց մասնագէտ բժիշկը իւրեանց հազարաւոր փորձերէ վերջ եկած են այն եզրակացութեան թէ՝ երբ առաջին անգամ մարդկային սեռի ծննդական գործարանաց վրայ Տուիախտի վէրքը կը յայտնուի եւ վարակեալի

ներսէն սնդիկ կը տրուի . դարձեալ սիֆիլիզի
նշանները կը յայտնուին , անուրանալի է նաեւ
թէ փոխանակ վարակեալը արդիւնք մ'ունենալու
սնդիկի գործածութիւնը անոր ներքին գործա-
րանաց խանգարման պատճառ կը լինի :

Երբ մէկը առաջին աստիճան սիֆիլիզէ կը
տառապի այսինքն իր ծննդական գործարանի վը-
րայ շանքը կունենայ առանց վայրկեան մը վա-
րանելու պէտք է ինքինքը յանձնել բժշկական-
դարմանի , առանց ասոր թող ամեն ոք հա-
մոզուի թէ անկարելի է իր բուժումը առանց
բժշկի ձեռք բերելու . զգուշանալու է նաեւ խարե-
բայ եւ ինքնակոչ բժիշկներէ որոնք փոխանակ
օգտական լինելու մեծ վնասներ կը պատճառեն-
իրենց թունաւոր դեղերով :

1886 թուականին Պէրլինի մէջ բժշկական հա-
մաժողով մը գումարուելով որոշեցին թէ առանց
ներսէն սնդիկ գործածելու Տոփիախտէ վարակեալ-
ները պիտի դարմանուին . ժողովոյ որոշումը ըն-
դունուելով սոյն մեթոդի վրայ սկսան դարմանել
եւ մինչեւ այսօր ալ գերմանացի բժիշկը այս կեր-
պով կը դարմանեն սիֆիլիզ հիւանդութիւնը :

Սնդիկը ներսէն գործածուելով մեծ օգուտ մը
չի կրնար ունենալ վարակեալը . եթէ ունենայ
պէտք է զիտնալ որ այդ օգուտը առժամանակեայ-
է եւ կարճ ժամանակ նա մթիթարութիւն մը
կունենայ : Շատ անգամ տեսնուած է թէ հինցած
ջերմերու համար սիլֆարը (Sulfate de quinine)
օգուտ մը չըներ եւ չերմը կը շարունակուի ամեն-

Թը եւ կամ երկու օրը մի անգամ. եւ ուրիշ դեղեռով առանց սիւլֆարը գործածելու ջերմը կանհետանայ եւ հիւանդը կը դարմանուի. ճիշտ ասոր նման է մնդիկի գործածութիւնը ներքնապէս. սիփիլիզի նկատմամբ :

Հին ատենները մնդիկը ներսէն կը գործածէին հիւանդին բերնէն լորձունք (salivation) վազցնելու համար, եւ այնքան մեծ քանակութեամբ մնդիկ կուտային որ մարդուս կզակի ոսկորները կը մնային եւ եթէ բերնին մէջ 4-5 ակուայ մնար բաղդաւոր կը համարուէր այն անձը : Իսկ այսօր որ մնդիկը չափաւոր կերպիւ կը գործածուի ներսէն այնշափ վնասակար չը լինիր. բաւական է որ մնդիկի քանակութիւնը եւ գործածման կերպը յարկ է դիտնալ: Իսկ եթէ մնդիկը ներսէն առանց չափը եւ քանակութիւնը դիտնալու գործածուի անպատճառ ստամոքսի խանգարում պիտի ունենայ. բերնին ակռանները ամբողջութեամբ կը թափի, եւ ասոնցմէ զատ մարդուս ներքին գործարանք եւս վնասէ զերծ չեն մնար :

Մնդիկը ուրիշ կերպով ալ կրնայ գործածուիլ որ ամենէն դիւրին եւ ամենէն օգտակարն կրնայ համարուիլ. այսինքն օրը երկու անգամ առաւօտ եւ երեկոյ մորթի վրայէն շփել մնդըկաւոր օծանելիքով. (Onguent Mercurielle fort) 20 կրամ մնդըկաւոր օծանելիքը բաժնել 12 մասի եւ երկու մասը գործածել օրը. շփելով մարմնոյն դնդերաւոր (Musculeux) մասանց վրայ. զգուշանալու է ոսկորտ մասանց վրայ քսելէ. ճիշդ վեց օրէն սոյն

գործողութիւնը կ'աւարտի անմիջապէս տաք բացանիք երթալ ու մի քանի օրէն կրկնել . այս կերպով սնդիկը աւելի շուտ կը ներգործէ . եւ երրորդ կամ չորրորդ օրը կսկսի բերնի լորձումքը (Salivation) նոյն ատեն բերանը լուալու է (gargarisme) հետեւեալ ջրով . — Chlorate de potasse 10 grammes. Eau Commun 300 grammes. իսկ սիֆիլիզէ վարակեալ տղայոց համար ալ սնդիկի սոյն կերպ գործածելը շատ օգտակար է . միայն թէ հասակին համեմատ չափը գործածելու է . 10 տարեկան տղու մը համար օրը մէկ կրամ սնդիկի օժանելիքը երկու մասի բաժնել եւ առաւօտ ու երեկոյ գործածել :

Վերջին տարիներս սկսան բժիշկք վերացեալ սնդիկ (Sublimé Corrosive) ալ գործածել վարակելոց՝ այսինքն մորթի վրայէն ասեղնաւոր գրեխսի միջոցաւ (Sering de Prévas) ներքսարկել . բայց գործածման ձեւը արդիւնաւոր չինելով մարմնոյն ներքսարկուած մասի վրայ գործողութենէն մի քանի օր վերջ սաստիկ ցաւ . բորբոքում եւ ի վերջոյ վէրք յայտնուեցաւ . այժմ սոյն դրութիւնը Ռուսիոյ եւ Անգղիոյ մէջ կը գործածեն :

Սիֆիլիզի դարմանման համար սնդիկէ զատ կան նաեւ շատ տեսակ դեղեր որոնք առանց բժշկի մը ներկայանալու գործածելը նպաստաւոր չըլինիր . երբեմն մարդիկ օգուտ մը ձեռք բերելու նպատակաւ մեծամեծ չարեաց պատճառ կը լինին :

Ներկայ ժամանակիս մէջ ընդհանրապէս ամեն որկրի մէջ Սիֆիլիզի դէմիրը դարման յովդ-եւ

սնդիկն է որ կը գործածուի (Proto-iodure de Mercure) իւրաքանչիւր դեղահատի մէջ 3-5 սանթիկրամ յովդախառն սնդիկ դնելով օրը երկու հատ միայն ներսէն կը գործածուի . բայց նախապէս միքանի օր պէտք է առաւօտները մէկ հատ միայն առնուլ եւ յետոյ երկուքի բարձրացնել :

Հաստ Տօգիթոր Ռիքոսի յովդախառն սնդիկը պէտք է շարունակաբար վեց ամիս գործածել իսկ ուսանք ալաւելի երկար ատեն գործածելու է կ'ըսեն :

Ներսէն սնդիկ դործածողք ամառուան տաք օրերու մէջ աւելի օգուտ կրնան ունենալ . իսկ ձըմեռնային ժամանակ շատ վնասաբեր կրնայ լինիլ :

Սնդիկ գործածողք պէտք է զգուշանան ցրտէն , յոգնութենէ , եւ ծանր աշխատութիւններէ . պարզ կերակուրներով սնանիլ հարկ է :

Յովդախառն սնդիկի դեղահատ գործածողք երբ իրենց բերնի մէջ բորբոքում մ'զգան անմիջապէս դադրելու են գործածելէ մինչեւ որ սոյն բորբոքումը անցնի . եւ յետոյ կրնայ շարունակուիլ . զգուշանալ արբեցողութենէ եւ անկանոն կեանք վարել :

Երկար ատեն սնդիկ գործածողք ընդհանրապէս կը վնասուին . մորթի բորբոքում , բերնին մէջ վէրքեր կը յայտնուին , ակռաները կը թափին . փորհարութիւն , (Diarrhée) ամբողջ մարմնոյ ջլատում . ասոնք սիֆիլիզի ախտանշաններ չեն համարուիր . այլ սնդիկի գործածման հետեւանքը :

Մեծ քանակութեամբ սնդիկ գործածող անձանց մարմնոյ քայլքայումը հետեւեալ կերպիւ կըսկսի նախ ուտելու ախորժակը կը կորսնցունէ , դէմք

գոյնը կը դեղնի . ձեռքերը եւ ոտքերը կուռենան ,
շարունակ փորհարութիւն . եւ վերջին ծայր նի-
հարնալով կը մեռնին :

, Անհրաժեշտ է նաեւ մնդիկ գործածողք փոքրիկ
քանակութեամբ չլօրաք չը թօրաս (Chlorate de
potasse I,0: Eau Distillée 150, grammes) առնուլ
ներսէն օրը երկու թէյի դգալ . եւ դարձեալ ստէպ
ստէպ կոկորդը ողողել (Gargarisme) քլօրաթի ջրով :

Շատ անգամ կը պատահի որ յզի կանայք եւս
վարակուին սիֆիլիզէ . ասոնց համար ներսէն
մնդիկ կրնայ գործածութիւն . եւ ասով թէ՝ իրեն
եւ թէ՝ արգանդին մէջ եղած տղուն ալ օգուտ մը
կը լինի :

Երբ վարակեալ կնոջմէ ծնած երախային մարմ-
նոյ վրայ տեսնուի սիֆիլիզի նշանները . այն ատեն
մայրը պարտաւորեալէ պօրասիոնով միացած իօս
գործածել ներսէն այսպիսով դիեցման միջոցաւ
մօրը կաթով սնունդ առնող երախան եւս կօգտուի :

Երկրորդ աստիճան սիֆիլիզ ունեցող մը իօսիւո
չը թօրասիումը մնդիկի հետ խառն գործածելուէ .
ինչպէս որ շատ բժիշկներ կը գործածեն ժիպէրի
օշարակը երկու ապուրի դգալ օրը :

Երբեմն սիֆիլիզէ վարակեալ երիտասարդներ
մի քանի անգամ միայն բժշկի կը դիմեն դարմա-
նուելու համար . Երբ մի քիչ առողջութիւն կը գըտ-
նեն կարծելով թէ բոլորովին ապաքինած են ալ եւս
ռժշկին չեն մօտենար . այսպիսով կէս ճամբան կը
նան . առանց մտածելու թէ հին մեղքերուն թո-
ռթիւմը դժուարաւ կը տրուի :

Ոմանք ալ հիւանդութեան երկիւղէն եւ կաս-
կածէն տգիտաբար կը մղուին մերթ ընդ մերթ
բժիշկ փոխել. դեղ փոխել եւայլն . կարծելով թէ
օգտակար կը լինի . բայց թող նա համոզովի որ
այս ընթացքով իր վիճակը օր ըստ օրէ կը ծան-
րանայ եւ փոխանակ օգտուելու մեծ վնասներ կը
կրէ . այս մասին պէտք չէ որ լւեմք . հիւանդաց
անտարբերութիւնը՝ սոսկալի հետեւանքներ կունե-
նայ միշտ :

Երբեմն ալ տոփախտէ վարակեալ ամուսնացած
մարդիկներ կը լինին որ իւրեանց ամուսնէն գաղտ-
նի կը պահեն հիւանդութիւննին . եւ ինքինքը բո-
լորովին առողջ ցոյց կուտայ , եւ իր վրայ կասկած
չի հրաւիրելու համար կինը ինչ կերակուր որ դնէ
սեղանի վրայ նա կը ճաշէ . հոդ չէ թէ այդ կերա-
կուրը իր հիւանդութեան օգտակար եւ կամ վնա-
սակար լինի , թողունք կերակրոյ խնդիրը . նա մին-
չեւ իսկ չի զգուշանար եւ անխղճօրէն կը մերձե-
նայ իր կնոջ . ասի ոճրագործութիւն կը համար-
ուի բացարձակապէս :

Այսպիսի ընթացքով այն ատեն կը խոստովանին
վարակեալ ըլլանին՝ երբ արդէն տոփախտի վէր-
քերով կը լեցուի իւր ամբողջ մարմինը :

Սիֆլիզը մեծ մասամբ ամուրի եւ ուշ ամուս-
նացող մարդոց մէջ կը գտնուի : —



ԳԼՈՒԽ ՏԱՄԱԿԱԹՈՒԹԻՒՆ

ՍԵՐՄԱԿԱԹՈՒԹԻՒՆ (1) (ՊԵԼԱԳՈՎՐԴԵ)

(Blennorrhagie ou Gonorrhée)

Սերմակաթութիւնը մարդկային երկու սեռն
ալ կը վարակէ . արական սեռի միզանցքի ճանա-
պարհը կը լինի . ասկից կը հոսի գեղնագոյն ժահը .
իսկ կանանց արգանդի կողմը կը լինի եւ դարձեաբ-
նոյն տեսակ թարախային հիւթ մը կը հոսի սեր-
մակաթութիւնն ալ Ափրոդիտական հիւանդութիւն
կը համարուի . եւ մարդիկ կը վարակուին առ հա-
սարակ զուգաւորութեան միջոցաւ :

Շատեր ալ կուզեն հաստատել թէ սերմակա-
թութիւնը ուրիշ պատճառներէ ալյառաջ կուգայ .
այսինքն զուգաւորութիւն՝ հակառակ բնութեան .
զուգաւորութիւն՝ կնոջ ամսական արեան հոսման
ժամանակ :


Սերմակաթութիւնը զուգաւորութենէ անմի-
ջապէս 3-4 օր վերջ (երբեմն ալ շատ կանուխ) մի-
զանցքին մածուցիկ բազմաթելին մարմաջումը ,

(1) Սերմակաթութիւն ըսելով պէտք չէ հսուկնալ թէ
այդ հոսած հեղուկը մարդկային սերմն է այլ բոլորովին տար-
բեր ժանդահոս և թունաւոր թարախ մ'է վարակիչ բնաւորու-
թեամբ , այս հիւանդութեան մաղսակաթութիւն ալ կըսուի .

գրգռումը եւ ջերմութիւնը զգալի կը լինի . եւ Զե
ժամ այդ գարշահոտ ժահրի հոսումը կը յայտնուի .
երբեմն ցաւով կակսի եւ երբեմն ալ առանց ցաւի .
գիշերները աւելի անհանգստութիւն կը պատճառէ
մանաւանդ սերմնահոսութիւն երբ կը պատահի .
սերմնակաթութեան ժահրը առաջին անգամ բարակ ,
սպիտակագոյն եւ ջրային է . մի քանի օր վերջ գոյնը
կը փոխուի դեղին եւ կամ բաց կանանչագոյնի .
Եթէ անխնամ թողուի միշտ վտանգաւոր արգասիք
կը բերէ մարդկային առողջութեան :

Սերմնակաթութիւնն ալ աստիճաններ ունի Տո-
փախտի նման եւ կը բաժնուի չորսի . Ա . աստի-
ճան . վարակումն , Բ . աստիճան . հիւանդութեան
սկզբնաւորութիւնը եւ սաստկանալը . Գ . աստի-
ճան . հիւանդութեան նոյն վիճակի մէջ մնալը ու եւ
է առանց տարբերութեան , եւ Դ . աստիճան . հի-
ւանդութեան ապաքինման վիճակը : Եթէ առաջին
անգամ բժշկի մը դիմէ վարակեալը շատ կարճ ժա-
մանակամիջոցի մէջ կրնայ դարմանուիլ . իսկ եթէ
անհոգ գտնուի ալ եւս բոլորովին դարմանել ան-
կարելի լինելով սերմնակաթութեան տեւական վէրք
մը կը թողու . այսինքն առաւոտները կաթիլ մը
սպիտակ հեղուկ կը տեսնուի արանդամի ծայրը .
ասի կը կոչուի Goutte Militaire :

Սերմնակաթութեան պատճառաւ արական սե-
ռը տարբեր հիւանդութիւններու ենթակայ կը լի-
նի . ինչպէս պալանիրը (Balanite) որ արանդամի
ծայր-մաշկի ներքնակողմը փոքրիկ պալարներ կը
լինին . ասոր դարմանը շատ դիւրիւն է . Eau de





Մողասակաթութեան թυրախով վարակեալ աշացաւ
(Ophthalmie Bléennorrhagique)

Gouillard. (գուրշուն սովոր) ով լուալ մի քանի անգամ։ Եատ անգամ ալ սերմնակաթութեան հետեւանքը կը լինի ֆիմող եւ բառափիմող (Phymosis et Paraphimosis) հիւանդութիւնները։ այսինքն արանդամի վերնամաշկի բորբոքումը որ շատ անգամ վտանգաւոր արգասիքներ կը թողուն։ Պէտք է գիտնալ որ պաշանիթ ֆիմող եւ բառափիմող հիւանդութիւններէն թլփատեալ ազդեր ազատ կը մնան բնականաբար։

Սերմնակաթութեան ենթակայ եղող անձինք շատ անգամ միզանցքաբորբոքում եւ արիւնհոսութիւն կունենան։ ասոնց պատճառը գլխաւորաբար հիւանդին անզգուշութիւններն են։ եւ կարդ մը ինքնակոչ բժիշկներու տուած թունաւոր եւ գրգորիչ դեղերէն յառաջ կուգայ. մերթ ընդ մերթ այդ կարգի խարերայ բժիշկը երիտասարդաց մահուան պատճառ կը լինին։ Այդ վնասակար դեղերէն ամենասոսակալին է յոհաննանանձը (Cantharide) գունտուզ պկօձէյի որուն յատկութիւնն է մարդուս երիկամումքները (Rein, պկօպրէյ) վնասելով կերթայ փամիուշտն ալ կը վիրաւորէ ու արիւնհոսութիւն կը պատճառէ. այս վտանգները աչքի առջեւ ունենալով հիւանդը պարտի երթալ վկայեալ բժշկի մը եւ դարմանուիլ։

Սերմնակաթութիւնը ինչպէս արանց համար. նոյնպէս ալ կանանց միեւմոյնն է. իգական սեռը իր արգանդի մէջ այնչափ ցաւ չի զգար, եւ արական սեռի նման անհանգստութիւն չունի. կինն առանց զգալու թէ սերմնակաթութեամբ վարա-

կուած է . կրնայ մնալ երկար ատեն : Կանայք շատ դիւրութեամբ կրնան վարակուիլ սերմնակաթութենէ եւ առանց գիտնալու վարակելիրեն հետ զուգաւորողները . եւ երկար ատեն նա կը զուգաւորի ու եւ է ցաւ եւ կամ անհանգստութիւն զգալու , իսկ երբ իւրեանց հիւանդութիւնը զգալի կը լինի նա էրիկ մարդու հետ կը զուգաւորի կարծելով թէ իր ունեցածը էրիկ մարդուն պիտի տայ եւ այս կերպով ինքը պիտի դարմանուի . ընդհակառակը կինը իր ցաւերը սաստկացնելու առիթ կուտայ :



ՍԵՐՄՆԱԿԱԹՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆԸ ԵՒ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Սերմնակաթութիւնը այնչափ մնասարեր չը լինիր մարդուս եւ շատ դիւրաւ կրնայ դարմանուիլ . բաւական է որ վարակեալը բժշկի դիմէ . եւ անորտուած հրահանդի համեմատ վարուի : Վարակեալքը զգուշանալու են ուտելիքէ եւ ըմպելիքէ . օդի . գինի . սուրճ . թէյ . գարեջուր եւ համեմաւոր կերակուրներ մնասակար են . արգիլեալ են նաեւ զուգաւորութիւն . երբէք չը պարել . չը քալել ժամերով . ձի չը հեծնել . գիշերը կռնակին վրայ չի պառկիլ որպէսզի սերմնահոսութիւն տեղի չունենայ . եթէ ստիպողական է տունէն դուրս ելլել անհրա-

ժեշտ է աղեկապ (Suspensoir) կրել. բաղանիք երթալն ալ օգտակար կրնայ վինիլ.

Սերմնակաթութենէ վարակեալք կրնան գործածել հետեւեալ դեղերը. հիւանդութիւնը յայտնուելէն շարունակ շաբաթ մը պէտք է խմէ՝ եռացած գարիի ջուրը առնել եւ մէջը (100. տրամ ջուրի) Յ կրամ բորակ խառնել ու կէս կէս գաւաթ խմել. մի շաբաթ վերջ կրնայ ներսէն առնուել բարսմի հետ խառն հնդիկ պղպեղ իւրաքանչիւրէն 30 ական կրամ իրար խառնել ու օրը Յ թէյի դգալ առնուլ:

Սերմնակաթութեան ամենէն լաւ դարմանը միզային ճանապարհը փոքրիկ գրեխով լուալն է օրը երկու կամ երեք անգամ հետեւեալ դեղով. Sulfate de Zinc 1,0. Acétate de Plomb 2,0. Eau Distillée 150 grammes. բացի ասկէ ուրիշ զօրաւոր դեղեր գործածելէ զգուշանալու է. ինչպէս է. դժոխայան (Nitrate d'Argent. ճեհեննեմ բաշը) պղնձածծմբան (Sulfate de Cuivre կօզ թաշը) եւն. սոյն դրդուի դեղերը միզանցքի ճանապարհը սեղմելով կը նեղցնէ եւ նորանոր հիւանդութեանց պատճառ կը լինի :

Դիմաւորապէս զգուշանալու է սերմնակաթութեան թունաւոր ժահրէն որ անզգուշութեամբ աչքերուն դպի. ասի շատ վնասակար է. անմիջապէս աչաց դրսի լորձնուտ մաշկերը վարակուելով կը բորբոքին եւ (Ophthalmie Blennoirrhagique) անոն աչացաւութեան ենթակայ կը լինին. շատ անգամ մարդ յաւիտենական կը զրկուի աչքի լոյսէ, ուստի

ամեն անգամ հարկ է որ վարակեալը իր արական անդամը շօշափելէ վերջ անմիջապէս լուացուի որ-պէսզի հիւանդութիւնը իր ձեռքերով աչաց չըփո-խադրէ : Մինչեւ որ մարդ սերմնակաթութենէ կա-տարեալ առողջութիւն չիգտնէ զգուշանալու է ար-բեցողրութենէ եւ այլ վնասաքեր միջոցներէ . այս հիւանդութեան միակ դարմանը համբերութիւնն եւ զգուշութիւնն է :

ՄԱՍՆԱԿՈՐ ՀՐԱՑԱՆԳ ԱՓՐՈԴԻՏԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ

Երբ մարդ անծանօթ է եւ կատարեալ համո-զում մը չէ գոյացուցած այն կնոջ գրայ . զրի կու-զէ անոր հետ զուգաւորիլ . նախ եւ առաջ անոր առողջ եւ կամ վարակուած լինելը հասկնալու հա-մար պարտի հետեւեալ գործողութիւնները կա-տարէ նախապէս :

Ա. — Այրը պէտք է նայիլ կնոջ իգամուռքի արտա-քին բացուածքի շուրջը եւ եթէ արտաքին շրթանց կրայ տեսնուի . պալար մը՝ վէրք մը եւ կամ դեղ-նագոյն ժահը անկասկած կերպիւ համոզուելուէ թէ՝ կինը վարակեալ է տուփախտով :

Բ. — Եթէ կնոջ արգանդէն սպիտակ կամ դեղ-նագոյն հեղուկ մը կը հոսի . եւ թէ դարշահոտ է այդ ալ կապացուցանէ թէ նա իր արգանդի շըր-

ջապատը եւ կամ ներքնակողմը բորբոքում եւ կամ բացուած պալարներ ունի, սա եւս ապացոյց մ'է թէ կինը առողջ եւ թէ մաքուր չէ, եւ ասի հաստատելու համար մասնաւոր գործիքով եթէ մինչեւ արգանդը տեսնուի անպատճառ շանքրի վէրքը պիտի յայտնուի :

Գ. — Կնոջ ամբողջ մարմինը աչքէ անցնել. եթէ մարմայն վրայ ո՛ եւ է բորբոքում, պալար եւ կամ վէրք մը չունի կրնայ մարդ ապահով լինիլ. դարձեալ կնոջ բերանը. կոկորդը եւ բերնի շրթանց ներքնակողմը նայիլ մի գուցէ փոքրիկ վէրքեր լինին :

Մեր սոյն զգուշական միջոցները միայն արանց համար չենք ըներ. այլ կանայք եւս հաւասարապէս իրաւունք ունին փոխադարձաբար վերոյիշեալ զգուշական միջոցները ի գործ դնել արանց վրայ որպէսզի կարենան ապահով լինել:

Զուգաւորութենէ վերջ թէ՝ կինը եւ թէ՝ էրիկ մարդը իւրեանց ծննդական գործարանը պարզ ջըրով լուալու են. անմաքրութիւնն եւս ափրոդիտական հիւանդութեանց արտադրման պատճառ կրնան լինել:

Սոյն հիւանդութեանց սոսկալի հետեւանգները երբ մարդ. կը մտարերէ. կը խորշի. եւ իր բնական ցանկութիւնը կուզէ զսպել իր մէջ. կան մարդիկ որ ցկեանս կը հրաժարին հեշտական շռայլութեան հետեւեէ. վայրկենական զուարձութեան մը համար չ'արժէր որ մարդ իր կեանքը վտանգի ենթարկէ եւ երկար տարիներ զարհուրելի եւ միանդամայն զգուելի ախտերով տառապի :

ԳԼՈՒԽ ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄՈՐՑԻՔՆԵՐՈՒ ՌԻՌԵՑՔԸ (Orchite)

Օռշիթը առ հասարակ սեմնակաթութենէ վերջ կը յայտնուի, այսինքն հոսումը չը դադրած. երբ Օռշիթը երեւան կելլէ սերմնակաթութեան գարշահոտ ժահրը կը գաղրի, եւ ի վերջոյ դարձեալ կըսկսի հոսումը: Սորա գլխաւոր պատճառներն են, սերմնակաթութենէ վարակեալ անձը երբ կը շարունակէ իր մոլութիւնները. արբեցողութիւն. ոգելից ըմպելեաց. զուգաւորութիւն. ձի հեծնել սովորականէն աւելի ճամբայ քալել. եւ կարգ մը ինքնակոչ բժիշկներու գրգռիչ եւ վնասակար դեղերը գործածելէն ալ կրնայ պատահիլ: Օռշիթը՝ նախ կըսկսի ամորձիքները ուռենալ եւ հետզհետէ սաստիկ ցաւերովյառաջնալ հիւանդութիւնը. այսպէս կը շարունակուի շարաթ մը եւ դարմանումը կը տեսէ ամբողջ երեք շարաթ. Օռշիթը բոլորովին չի դարմանուիր նախապէս. ուռեցքը անհետանալէ վերջ հապկին վերի կողմը կարծրութիւն մը կը մնայ եւ այդ կարծրութիւնը հազիւ մի քանի ամիսէն կրնայ անհետանալ բժշկական դեղերով. իսկ եթէ անխնամ թողուի այդ կարծրութենէն առաջ կուգայ ուրիշ հիւանդութիւններ այսինքն՝ ամորձիքներու մէջ երբեմն թարախ եւ երբեմն ալ դեղնագոյն ջուր մը կը լինայ. եւ եթէ բոլորովին անխնամ թողուի այն ատեն մսոյ փառութիւն (Gangréne) եւս կը պատահի: